ԽԱԲԱՐԲԱՁԻԿ

«Մանկանց երկիրը» մանկապատանեկան ալմանախի հավելված I 4’2013

Լուսանկարը՝ Լաուրա Սահակյանի, 17տ.

Դաս

Նկարը՝ Մանե Պետրոսյանի, 10տ.

«Հայացք ներսից»

լուսանկարչական ցուցահանդես և վավերագրական ֆիլմերի շնորհանդես Գյումրիում

Սեպտեմբերի վերջին Գյումրիի «Հոկտեմբեր» կինոթատրոնում «Մանանա» կենտրոնը կազմակերպել էր «Հայացք ներսից» խորագրով ֆոտոցուցահանդես և ֆիլմերի ցուցադրություն, որտեղ առաջին անգամ լայն հանրությանը ներկայացվեցին կենտրոնի մարզային թղթակիցների աշխատանքները: Շիրակի, Լոռու, Տավուշի, Կոտայքի ու Գեղարքունիքի պատանի լրագրողների լուսանկարներն ու վավերագրական ֆիլմերը մեծ հետաքրքրություն առաջացրին ու ջերմությամբ ընդունվեցին մեծաթիվ հանդիսատեսի կողմից: Միջոցառմանը մասնակցելու նպատակով Գյումրի էին ժամանել պատանի թղթակիցներ բոլոր հինգ մարզերից: Ստորև ներկայացնում ենք նրանց տպավորությունները: Մեր կողմից միայն հավելենք, որ առաջիկայում նման միջոցառումներ կազմակերպվելու են հանրապետության այլ մարզերում ևս:

Դեռ երկար կհիշեմ

-Հլը շուտ էրեք, էդ նկարները նայեք՝ չջարդեք:

Այսպես էին սկսվում նախորդ երկու օրերը «Հոկտեմբեր» կինոթատրոնում, որն ամբողջովին «մանանայական» ոգով էր լցվել, ես կասեի, ողջ Գյումրին էր «մանանայոտ», քանի որ ամեն տեղ փակցված էին մեր պաստառներն ու նկարները: Բոլորս սպասում էինք սեպտեմբերի 25-ին: Նախորդ օրերի՝ մինչ երեկո տևած աշխատանքները տվեցին իրենց ցանկալի արդյունքը:

-Էրեվանին ես բըդի տանիմ… Իսահակյանի թանգարան:

-Իաաաաաա… Ես բըդի տանիմ, բայց Ֆրունզիկի թանգարան:

-Իջևանը՝ ես…

Այսպես անընդհատ վիճում էինք, թե ով և որ մարզի պատանի թղթակիցներին պետք է ուղեկցի քաղաքի տեսարժան վայրերով:

Մարդիկ ուզում էին առաջինը տեսնել մեր նշանավոր «Խաբարբզիկը» ու տեղում ընթերցել, դեռ մի բան էլ անձամբ զրուցել հեղինակների հետ:

Դե, իսկ լրատվամիջոցների առկայությունը էլ ավելի պաշտոնական էր դարձնում միջոցառումը: Բայց կարևորն այն էր, որ բոլորս միասին էինք, անմիջական, ու ամեն մեկն անում էր այն, ինչը մի օգուտ պիտի տար… Ու տվեց:

Մեր հայտնի անիմացիոն ֆիլմից հետո միջոցառումը պետք է ավարտվեր, բայց հուրախություն մեզ, հանդիսատեսը չէր հեռանում, այլ կլանված դիտում էր լուսանկարները ու փորձում հեղինակներին գտնել:

Հարազատ դեմքեր, բարեկամներ, լիքը-լիքը ընկերներ, մարդկանց գեղեցիկ ժպիտներ, ամեն անկյունից լսվող հաճոյախոսություններ, մի շարք նկարներ ու ֆիլմեր… Էլ ի՞նչ է պետք սկսնակ լրագրողին…

P.S. Մեր պաստառներից մեկը միջոցառումից դեռ երկար ժամանակ անց կախված էր կինոթատրոնի պատից, երևի պատճառն այն էր, որ մեր պաստառը մյուսներից շատ էր տարբերվում, ու ոչ մեկի ձեռքը չէր գնում պատռել:

Լեյլի Թադևոսյան
Շիրակի մարզ, ք.Գյումրի

Արդեն մտածում եմ նոր ֆիլմի մասին

Առաջին անգամ էի գնում Գյումրի: Ասեմ, որ Գյումրին ավելի շատ է մայրաքաղաք կոչվելու արժանի, քան Երևանը, թող ինձ ներեն երևանցիները: Հոյակապ տեղ, հակասություններով լի. նախորդ դարի հոյակերտ շենքեր և դրանց կից՝ երկրաշարժից կիսավեր տներ, նույնիսկ փլատակներ:

Զարմանալի է նաև այն, թե այդքան դառնություն տեսած գյումրեցիների մեջ ինչպես է պահպանվել հավատը, ինչը չէի ասի մեր տարածաշրջանի մարդկանց մասին:

Անկեղծ ասած, շատ մեծ ոգևորությամբ ու անհանգստությամբ էի սպասում փառատոնին: Սպասումներս արդարացան. ըստ իս, մեր ընտանիքի մասին ֆիլմը շատ լավ էր ստացվել, ես դա հասկացա դահլիճի ջերմ արձագանքից ևս, որի համար շատ մեծ շնորհակալություն եմ հայտնում ինձ աջակցողներին: Մյուս ֆիլմերը ևս շատ հետաքրքիր էին:

Մոռացա ասել, որ հանդիպեցի մյուս մարզերի իմ սիրելի ընկերներին, որոնց երկար ժամանակ էր՝ չէի տեսել ու շատ էի կարոտել:

Փառատոնից շատ մեծ բավականություն ստացա, շատ ոգևորվեցի և արդեն մտածում եմ իմ նոր ֆիլմերի, նյութերի ու լուսանկարների մասին:

Աստղիկ Ղազարյան
Տավուշի մարզ, գ.Գետահովիտ

Ամեն բան մեր ձեռքում է

Ինձ շատ դուր եկավ «Հայացք ներսից» ֆիլմերի պրեմիերան և լուսանկարչական ցուցահանդեսը, քանի որ տարբերվում էր իր

բովանդակությամբ և հասանելի էր բոլորին: Ֆիլմերի դիտումից հետո հասկացա, որ մարդն ինքը պետք է իր օրը լցնի վառ գույներով, կյանքին նայի ավելի լավատեսորեն, և իհարկե, երբեք չդադարի ստեղծագործել:

Կարինե Նահապետյան
Կոտայքի մարզ, ք. Հրազդան

Երջանիկ դեմքերն իբրև պատասխան

Դիլիջանի ամառային մեդիա-ճամբարի ավարտից հետո անհամբեր սպասում էի Գյումրիում կայանալիք մեր ֆիլմերի ցուցադրությանը:

Իջևանից Գյումրի հասնելու և հետ վերադառնալու համար 6 ժամ է անհրաժեշտ: Սակայն հաստատ արժեր 6 ժամ անցկացնել ճանապարհին՝ Գյումրու «Հոկտեմբեր» կինոթատրոնում պրեմիերային ներկա լինելու համար:

Քաղաքը մեզ ընդունեց տաք ու պայծառ արևի շողերով: Գյումրիում առաջին անգամ էի, և իմ ու այս հրաշալի քաղաքի հանդիպումը «Մանանան» կազմակերպեց: Մինչ զարմացած նայում և հիանում էի հնամենի շինություններով, հասանք քաղաքի գլխավոր հրապարակ, որը պակաս հիասքանչ չէր: Այստեղ էր գտնվում «Հոկտեմբեր» կինոթատրոնը (չէի կարող պատկերացնել, որ Գյումրին այսքան գեղեցիկ կինոթատրոն կարող է ունենալ):

Մեքենայից իջնելուն պես հերթով հանդիպում էի «Մանանայի» բոլոր անդամներին, որ այդքան հարազատ են դարձել ինձ:

Վերջապես մտանք կինոթատրոն: Նախասրահում մեր նկարած լուսանկարներն էին փակցված: Այնքան հաճելի էր տեսնել, որ մեր նկարները շատերին են հետաքրքրել, ինչի մասին փաստում էր սրահում գտնվող մարդկանց հոծ բազմությունը:

Սակայն բոլորս էլ սպասում էինք օրվա գլխավոր իրադարձությանը՝ ֆիլմերի պրեմիերային: Քիչ անց այն ևս կայացավ: Իհարկե, մեր աշխատանքի արդյունքը մեզ շատ գոհացրեց: Բացի այդ, այնքան հաճելի էր տեսնել դահլիճից դուրս եկող հանդիսատեսների գոհունակություն արտահայտող հայացքները: Չնայած նրան, որ այս ցուցադրության ժամանակ չկային իմ մասնակցությամբ նկարահանված ֆիլմերը, ես մեծ հաճույքով դիտում էի ընկերներիս աշխատանքները և գնահատում դրանք: Հետո իմացա, որ մյուս ցուցադրությունների ժամանակ իմ ֆիլմերը ևս կլինեն:

Այս ամբողջի մեջ միայն մի բան էր երևի թե պակասում՝ ժամանակը: Սակայն համոզված եմ, որ ինչքան էլ այն երկար լիներ, միևնույն է, չէր բավականացնի:

Սոնա Ղևոնդյան
Տավուշի մարզ, ք.Իջևան

Պակասում էր միայն ժամանակը

Հետաքրքիր էր դիտել մեր թղթակից-ընկերների աշխատանքները: Զգացմունքներս խառնվել էին իրար, նույնիսկ ֆիլմերը դիտելու ժամանակ արցունքներս խեղդում էին կոկորդս: Այս ցուցահանդեսը մեզ հնարավորություն ընձեռեց ծանոթանալ մյուս մարզերի մեր հասակակիցների հետ. տեսնել նրանց աշխատանքները, շփվել նրանց հետ: Ամեն ինչ շատ լավ էր կազմակերպված: Ես ինձ շատ լավ էի զգում այդ լուսավոր ու ջերմությամբ լի միջավայրում: Վատն այն էր, որ ժամանակն էր քիչ իրար ավելի

մոտիկից ճանաչելու համար, ավելի շատ թեմաների շուրջ քննարկումներ ունենալու համար:

Լիլիթ Բալաբեկյան
Կոտայքի մարզ, ք.Չարենցավան

Ու նաև նոր ընկերներ

Երևի սկսեմ նրանից, որ վերջապես իրականացավ իմ երազանքներից մեկը՝ անդամը դառնալ նման հետաքրքիր կազմակերպության, նման հրաշալի թիմի:

Գյումրի այցելությունը մի նպատակ արթնացրեց՝ ուզում եմ ես էլ նկարահանել ֆիլմ, որով իհարկե կհպարտանայի: Մեծ տպավորություններով եմ եկել Գյումրիից՝ ձեռք եմ բերել նոր ընկերներ, որոնց հետ շփվում եմ համացանցում: Կուզենայի կրկին մասնակցել ֆիլմերի ցուցադրությանը, բայց այս անքամ վատ չէր լինի դիտել նաև իմ ֆիլմերից:

Վահագ Մարտիրոսյան
Գեղարքունիքի մարզ,
ք.Ճամբարակ

Ես ամեն բան հավանել եմ

Կինոդիտումից շատ էի տպավորվել: Ես կառանձնացնեի «Ծերունին և ...» և մեր տավուշցիներ Տիգրանի ու Աստղիկի պատրաստած ֆիլմերը:

Վարսեր Զաքարյան
Տավուշի մարզ, ք.Իջևան

Նորից հետհաշվարկ՝ մինչ նոր հանդիպում

«Էրեխեք, սկսում ենք հետ հաշվարկը, մնաց 10 օր»,- տեսա Լեյլիի ստատուսը՝ ֆեյսբուքում: Վերջապես եկավ սպասված օրը: Տեսնելով այդքան շատ մարդկանց, սկսեցինք մեզ ավելի պատասխանատու զգալ, ներկայացնել աշխատանքները: Մենք էլ էինք առաջին անգամ տեսնում մեր ընկերների ֆիլմերը, ուսումնասիրում ֆոտոները: Հետո էլ բոլորին խնդրում էինք իրենց կարծիքները գրել «Տպավորությունների գրքում»:

Մարիամ Նալբանդյան
ք.Երևան

Նոր հայացքով

Սա լավ առիթ էր, ես ծանոթացա մեր մյուս մարզերի թղթակիցների հետ: Նրանց լուսանկարները տեսնելով, հասկացա, թե ինչի վրա էին ուշադրություն դարձրել իմ հասակակիցները: Չէի պատկերացնում, որ մեր շրջապատում այսքան զարմանալի մարդիկ են ապրում, ահա թե ինչ մտածեցի ֆիլմերը դիտելուց հետո:

Քրիստինե Բադասյան
Շիրակի մարզ, ք.Գյումրի

Մի խոսքով, շնորհակալություն

Ամեն ինչ հրաշալի էր, ինչպես սպասում էի՝ հաճելի միջավայր, բարեհամբույր անձնակազմ, որոնց այս կարճ ժամանակում հասցրեցի անչափ սիրել: Ես բոլոր պատանի թղթակիցների անունից շնորհակալություն եմ հայտնում «Մանանա» կենտրոնին, որ ստեղծեց նման ծրագիր և մեզ տվեց այսքան գիտելիքներ:

Աննա Այվազյան
Լոռու մարզ, ք. Վանաձոր

Լուսանկարները՝
Լիլիթ Կարապետյանի
Հովնան Բաղդասարյանի

Ավագ դպրոց

Սովորական և անսովոր

Գարնան վերջին և ամռան երեք ամիսներին ես գտնվում էի ծայրահեղ անորոշության մեջ, որովհետև չգիտեի, թե որտեղ է ճիշտ շարունակել ուսումս: Իմ փոփոխական ու բարդ բնավորության պատճառով ես հստակ չէի որոշել, թե ինչ եմ ուզում դառնալ: Հետևաբար պետք է մոռանայի քոլեջների մասին և հետաքրքրվեի ավագ դպրոցներով: Մեր թաղամասում ավագ դպրոցներ չկան, և ես ստիպված էի փնտրել լավ ավագ դպրոց թաղամասից դուրս: Իհարկե, ավագ դպրոցները շատ են, բայց դպրոցներից մեկը հեռու էր, մյուսը վեցօրյա էր, մի դպրոցում աշակերտները համազգեստով էին, մյուսում՝ էլ չգիտեմ՝ ինչ... Օգոստոսի նախավերջին շաբաթը առաջին դասարանցու նման հուզված ու անհանգիստ, հայրիկիս ձեռքը բռնած գնացի դպրոց ընդունվելու:

Արդեն մի քանի ամիս է՝ սովորում եմ ավագ դպրոցում: Դասընկերներս լավն են, ուսուցիչներս՝ նույնպես, դասաժամերն անցնում են հետաքրքիր: Չնայած այդ ամենին, մեկ է, չեմ սիրում ու չեմ ընդունում այս համակարգը: Նախ, ավարտելով հիմնական դպրոցը՝ ստիպված էի բաժանվել իմ ընկերներից, ուսուցիչներից, իսկ նոր միջավայրին հարմարվելն այդքան էլ հեշտ չէր: Բացի այդ, անիմաստ եմ համարում տասներկուամյա կրթությունը: Հետո, գիտե՞ք, չեմ կարծում, թե տարիների քանակն ավելացնելով բարձրացել է նաև կրթության որակը: Իմ ծնողները սովորել են տասնամյա համակարգով ու, եթե ոչ ավել, ապա պակաս գիտելիքներ հաստատ չեն ստացել:

Միակ լավ բանը, որ կապված է ավագ դպրոցի հետ, հոսքերի առկայությունն է, երբ ինքդ ես ընտրում, թե որ առարկաներն ես ցանկանում խորացված անցնել: Բայց, օրինակ, ես սովորում եմ լեզվաբանական հոսքում (իմիջիայլոց, այստեղ ոչ մի տղա չկա), սակայն աշխարհագրությունից ու քիմիայից հիմա ավելի շատ խնդիրներ եմ լուծում, քան իմ հիմնական դպրոցում, իսկ հոսքային առարկաները՝ հայոց լեզուն ու գրականությունը, նույնքան հետաքրքրությամբ ու խորն եմ ուսումնասիրում, որքան առաջ:

Ստացվում է, որ ես սովորում եմ սովորական դպրոցի սովորական տասներորդ դասարանում, պարզապես արդեն նոր երեխաների հետ ու նոր դպրոցում, որտեղ մեզ դասավանդում են նոր, բայց էլի սովորական ուսուցիչներ…

Միլենա Խաչիկյան, 15տ.

Եթե դիտարկենք երկու կողմից

Լավ կողմն այն է, որ դու իրավունք ունես ընտրելու, թե որ հոսքային դասարանում ես սովորելու:

Օրինակ, ես, շատ սիրելով լեզուները և համոզված լինելով, որ իմ հետագա մասնագիտությունը կապված է լինելու լեզուների հետ, սովորում եմ հումանիտար հոսքում: Այստեղ ես խորացված անցնում եմ ինձ հետաքրքրող առարկաները և շատ թեթև՝ բնագիտականները, որոնք ինձ չեն հետաքրքրում: Նաև փոխվում է դասապրոցեսը. դասն անցնում է աշակերտի համար ավելի հետաքրքիր, քան նախկին դպրոցում: Օրինակ, տնային հանձնարարությունից բացի լրացուցիչ կազմում ենք սխեմաներ և տարբեր զեկուցումներ ներկայացնում: Նաև մեծ ուշադրություն է դարձվում խմբային աշխատանքներին: Մատյանում կա առանձին սյունյակ, որտեղ գնահատում են աշակերտների խմբային աշխատանքները: Ես դա համարում եմ շատ կարևոր, քանի որ ամեն մարդ պետք է կարողանա աշխատել խմբով, հարգել և օգնել իր խմբի անդամներին: Այդպիսի աշխատանքը զարգացնում է միասնականության՝ կոլեկտիվիզմի զգացողությունը:

Ըստ իս, ծրագիրն ունի նաև բացասական կողմ: Ինը տարի սովորելով քո ընկերների հետ, ստիպված ես փոխել միջավայրը: Բայց, ինչ արած, ինձ թվում է, որ դա էլ է կարևոր: Պետք է հասկանալ, որ կյանքում միշտ չէ, որ լինելու է ինձ համար հարազատ միջավայր: Պետք է սովորել կարողանալ մուտք գործել նոր միջավայր:

Լիլի Նալբանդյան, 16տ.

Դե, իհարկե, ավագ դպրոց

Այս տարի առաջին անգամ գնացի ավագ դպրոց: Անցյալ տարի անհամբերությամբ սպասում էի, թե երբ կգա սեպտեմբերը, որ վերջապես ոտք դնեմ իմ պատկերացրած կատարյալ ուսումնական հաստատությունը: Կարելի է ասել, որ սպասումներս մասամբ արդարացան: Սկզբում մտածում էի, որ կկարոտեմ հին դասարանս, բայց սխալվում էի: Ոմանց նման չհարմարվելու խնդիր բնավ չունեի՝ հին ընկերներս ինձ հետ էին, իսկ նորերի հետ միանգամից ընկերացա: Ուսուցիչները անսահման խելացի, պատրաստված, ջերմ ու հոգատար են: Համեմատելով իմ հին դպրոցի հետ, ասեմ, որ այստեղ հսկողությունը ու խստությունը նկատելիորեն ավելի մեծ է, բոլոր

Լուսանկարը՝ Էլլա Խաչատրյանի, 11տ.

դասասենյակներում տեսախցիկներ են տեղադրված, բջջայինները դասերից առաջ պարտադիր հավաքում են և այլն, բայց դա մեզ միայն օգուտ է տալիս: Ընդունվելուց առաջ երկար էի մտածում՝ ավագ դպրոց, թե քոլեջ: Բայց ընտրեցի ավագ դպրոցը, որովհետև տարածքում այն ամենամոտն էր և ամենալավը և մինչ օրս էլ չեմ զղջում ընտրությանս համար:

Միլենա Ադամյան, 14տ.

Իմա՞ստը

«Ախր ինչի՞, ինչի՞ համար, իմա՞ստը... Ինչ վատ էր՝ առաջվա նման հանգիստ ավարտեինք, տասնյոթ տարեկանում նոր կորոշեինք՝ ինչ ենք դառնալու: Հիմա ես տասնչորսում ո՞նց որոշեմ»:

-Մարիա՛մ,- «արթնացրեց» ինձ մայրս փոխտնօրենի սենյակ մտնելուց առաջ:

«Ո՞ր մեղքիս համար, ախր... Հիմա ես էս մե՛ծ դպրոցից ո՞նց բան հասկանամ, լաբիրինթոս ա, դպրոց չի... Գոնե մի ծանոթ մարդ լիներ, բոլորն անծանոթ են, ախր...»:

-Ո՞ր հոսք ես ուզում,- խիստ հայացքով ինձ նայեց փոխտնօրենս:

-Հումանիտար: Լեզվաբանական:

«Բայց հաստա՞տ: Չէ, ոչ մի բան հաստատ չի լինում: Այս հոսքն ընտրելը նշանակում է, որ բացի պատմությունից ու լեզուներից ոչ մի ուրիշ առարկա նորմալ չեմ անցնելու: Իսկ տասնմեկերորդ դասարանից կլինեն առարկաներ, որ շաբաթը մեկ անգամ էլ չեմ անցնի: Ես շատ իմանամ՝ ինչ եմ ուզում, դեռ փոքր եմ այդպիսի կարևոր բան որոշելու համար... Լավ, ինչ լինում է, թող լինի»:

Ինչո՞ւ հիմա ես ամեն առավոտ պետք է գնամ այդքան հեռու գտնվող դպրոցը՝ երթուղայինում տրամադրությունս փչացնելով: Եվ այդ ամենը միայն այն պատճառով, որ ավագ դպրոցները ստեղծելիս նույնիսկ չմտածեցին, որ եթե մոտակա միջին դպրոցում անցնում են ֆրանսերեն, ավագում էլ անցնեն, որ այդ ֆրանսերեն անցած երեխաները միայն ֆրանսերենի պատճառով չգնան հասնեն ուրիշ վարչական շրջան: Եվ այդ դպրոցը՝ լրիվ անծանոթ, երեք տարում չէ, տասը տարում էլ չեմ սիրի: Չեմ էլ հարմարվի: Ո՞նց, ես այս տարիքում արդեն որոշեմ ամբողջ կյանքիս անելիքը և ունեմ հոսքս փոխելու ընդամենը մեկ հնարավորություն, որը պատրաստվում եմ օգտագործել, չնայած ընդամենը երկու ամիս է անցել: Եվ նորից վստահ չեմ՝ ճիշտ եմ անում, թե չէ: Ուզում եմ հնարավորություններս չկրճատել, բայց այդպես դուրս է գալիս, որ ինձ միայն ընդհանուր հոսքն է հարմար: Բայց ընդհանուր էլ, բնական է, գնալ չեմ կարող, որովհետև այնտեղ սովորում ենք ոչ թե ամեն ինչ, այլ ոչինչ: Չգիտեմ՝ ով է ավագ դպրոցի հեղինակը, բայց եթե ես նրա տեղը լինեի, հաստատ ինքնասպան կլինեի, եթե իմանայի, որ այդքան դեռահասներ երազում են իր դեմ մահափորձ անել: Գուցե իմ վատ տրամադրվածությունից է, որ ավագ դպրոցներն աչքիս այդքան վատն են երևում, բայց, եթե խոսքը վերաբերում է ավագ դպրոցին, ես չեմ էլ պատրաստվում փորձել լավ բան տեսնել դրա մեջ:

Մարիամ Նալբանդյան, 14տ.

Մաթեմատիկա՞, թե՞ լեզուներ

Սկզբում ինձ թվում էր, որ ավագ դպրոցում ավելի լավ կլինի, ավելի հեշտ կլինի սովորել, ավելի հետաքրքիր կլինի, կլինեն նոր ծանոթություններ և նոր ընկերներ, նաև կլինի ինչ-որ փոփոխություն կյանքում:

Սակայն ես մտափոխվեցի, երբ պետք է ընտրեի մի հոսք: Հոսքի ընտրությունն ինձ համար շատ դժվար էր, քանի որ դեռ չեմ որոշել մասնագիտությունս: Մի կողմից՝ շատ եմ սիրում լեզուներ, մյուս կողմից՝ մաթեմատիկա: Կանգնել էի երկու հոսքերի մեջտեղում: Ընտրելով տնտեսագիտական՝ պետք է խորացված անցնեի մաթեմատիկա, իսկ հումանիտար հոսքում խորանայի լեզուների մեջ: Մնացած հոսքերը բացառել էի, ընդհանուրն էլ ներառյալ, քանի որ գնալ ընդհանուր հոսք, նշանակում է՝ երեք տարի անիմաստ գնալ դպրոց և այդպես էլ ոչ մի նոր բան չսովորել:

Հոսք ընտրելու այդ մեծ խնդիրն ինձ ստիպում էր կարոտել հին դպրոցս: Տնտեսագիտականից փոխվելով հումանիտար, մտածելով՝ արդյո՞ք ճիշտ եմ վարվում, թե՝ ոչ, սեպտեմբերի մեկին, անցնելով հին դպրոցիս կողքով, ես տխրությամբ նայեցի դպրոցի շենքին: Ես շատ ափսոսեցի, որ այս տարի էլ կարիք չկա ճանճրացած լսել տնօրինության կողմից աշակերտներին ուղղված խոսքը և մտածել. «Սրա փոխարեն մի տասնհինգ րոպե ավել կքնեինք»: Նոր դպրոցի բակում ես, միևնույն է, հուսալով սպասում էի, որ մի այնպիսի բան կլինի, որի շնորհիվ ես շատ կսիրեմ նոր դպրոցը: Նոր դպրոցում ինձ դուր է գալիս դասարանս, և կան մի քանի առարկաներ, որ շատ հետաքրքիր են անցնում: Սակայն կան ճանճրալի դասեր, շատ են տնային աշխատանքները: Արդեն երեք ամիս է անցել, սակայն այդպես էլ չեմ հասկանում ավագ դպրոցի իմաստը:

Անի Ջիլավյան, 14տ.

Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի, 16տ.

Նոր առարկա

Քիմիա

Մինչև յոթերորդ դասարան ես գիտեի, թե քիմիա անցնելու համար մեզ ոչ մի դասագիրք էլ պետք չէ, որ ամեն դասի մենք գնալու ենք լաբորատորիա և կատարելու ենք փորձեր: Բայց այդպես չէ: Մենք ունենք դասագրքեր, ամեն դասին հաջորդող հարցերին պատասխանում ենք գրավոր և ոչ մի լաբորատորիա էլ չենք գնում: Հետո պարզվեց, որ լաբորատորիա մյուս տարի ենք գնալու, բայց ես դրան այդքան էլ չեմ հավատում:

Աննա Մակիչյան, 12տ.

Հանրահաշիվ

Հանրահաշիվ անցնելուց առաջ մտածում էի, որ էլ մեր մաթեմատիկայի ուսուցչուհուն չեմ տեսնելու, բայց, ցավոք, եկավ առաջին հանրահաշվի դասը, որը դարձավ կյանքիս մեծ հիասթափություններից մեկը: Ուսուցչուհին, հենց այն նույն ուսուցչուհին էր, ով մեզ մաթեմատիկա էր դասավանդում: Պարզվեց հանրահաշիվն էլ նույն մաթեմատիկան է:

Յուլյա Սանոյան, 12տ.

Իմ առաջին փորձը

Երբ գնում էի քիմիայի առաջին դասին, մտածում էի, թե մենք շատ փորձեր ենք անելու, բայց երկու ամսվա ընթացքում կատարել ենք մի փորձ, այն էլ՝ կիսատ: Նախ, մենք կատարեցինք նստեցում, հետո ֆիլտրում, և ֆիլտրի թղթի փոխարեն օգտագործեցինք անձեռոցիկ: Հետո պետք է ջուրը տաքացնեինք սպիրտայրոցի վրա, և գոլորշին անցներ սառնարանի միջով ու ջուր դառնար, բայց մենք դպրոցում չունենք սառնարան: Դրա համար մենք չկարողացանք ավարտել մեր փորձը: Պատճառն այն է, որ չունենք լավ սարքավորումներ: Մեր քիմիայի լաբորատորիան կիսել և դասասենյակ



Լուսանկարը՝ Բելլա Մելտոնյանի, 12տ.

են դարձրել: Հիմա քիմիայի դասարանը այնքան փոքր է, որ ուսուցչուհին հազիվ է տեղավորվում: Ուսուցիչը ասում է, որ նյութերը հին են, և փորձը կարող է այնքան էլ լավ չստացվել:

Արամ Վարդանյան, 12տ.

Նախնական զինվորական պատրաստություն

Այս տարի մենք սկսեցինք անցնել Նախնական զինվորական պատրաստություն կամ Ռազմագիտություն առարկան: Մինչև առաջին դասը ես մտածում էի, որ ռազմագիտության դասասենյակը պետք է լիներ շատ մեծ, սեղանների վրա պետք է դրված լինեին հրացաններ, իսկ սեղանների դիմաց՝ մեծ թիրախներ, որոնց վրա պետք է գրված լինեին կրակելու միավորները: Իմ կարծիքով, մենք չպիտի գրեինք գրավոր աշխատանքներ ու պատմեինք դասեր, այլ պիտի գնահատվեինք ըստ լավ և վատ կրակելու: Բայց իմ պատկերացումները շատ հեռու էին իրականությունից: Դասասենյակը փոքր է, չկան ոչ հրացաններ, ոչ էլ ատրճանակներ: Պատերին փակցված են տարբեր նկարներ, օրենքներ ու մի փոքր թուղթ, որի վրա գրված են կրակելու միավորները: Առաջին դասին մեր ուսուցիչն ասաց, որ դասընթացի ժամանակ մենք նաև կրակելու ենք, քանդելու և հավաքելու զենքերը: Սակայն մենք դեռ սովորում ենք այս առարկան բոլոր մյուս պատմողական առարկաների նման. ամեն դասին պատմում ենք տանը հանձնարարված դասը, ուսուցիչը մեզ գնահատում է և հետո պատմում նոր դասը, ինչպես նաև գրում ենք գրավոր աշխատանքներ:

Անահիտ Գյուլազյան, 13տ.

Ֆիզիկա, քիմիա, թե՝ մի ուրիշ բան

Այս տարի շատ են նոր առարկաները՝ քիմիա, ֆիզիկա, գրականություն, երկրաչափություն և հանրահաշիվ: Եվ հենց նոր առարկայի առաջին դասից ես արդեն պատկերացում եմ կազմում առարկայի մասին: Երբ ֆիզիկայի առաջին դասը արեցինք, ուղղակի

հիացա այդ առարկայով, հենց ամենաառաջինը ուսուցչուհու շնորհիվ: Բայց դեռ հինգերորդ դասարանում գիտեի, որ սիրելու եմ ֆիզիկան, որովհետև իմ շրջապատում բոլորը կապ ունեն ֆիզիկայի հետ: Պապիկներս ֆիզիկոս-ինժեներներ են, հայրիկս հիասքանչ գիտի ֆիզիկա, եղբայրս էլ սիրեց ֆիզիկան: Ես էլ նրան հետևեցի և այժմ սովորում եմ ֆիզիկան սիրելով: Իսկ, այ, քիմիա ես ընդհանրապես չեմ սիրում: Նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ անցնում էի բնագիտություն, ես չէի սիրում քիմիան: Սեր չունեմ նյութերի հետ:

Վերջերս տանը շատ է քննարկվում ապագա մասնագիտության թեման: Մայրիկս ինձ հարցնում է, թե ինչ եմ ուզում դառնալ: Ես ուսերս եմ թափ տալիս:

-Ընդունվի՛ր բժշկական,- ասում է:

-Մա՛մ, չեմ ուզում, ես չեմ սիրում:

-Լավ, իսկ դեղեր պատրաստե՞լ:

-Իսկ դրա համար ի՞նչ քննություն պիտի հանձնեմ:

-Քիմիա... Էլ ի՞նչ կար այնտեղ ...

-Չէ՛, չեմ ուզում: Ես քիմիա ՉԵՄ ՍԻՐՈՒՄ:

Արդեն կողմնորոշվել եմ, ապագա մասնագիտությունս քիմիայի հետ կապված չպետք է լինի:

Գոհար Կարախանյան, 12տ.

Պատմություն

Ես այս տարի անցնում եմ երեք նոր առարկա: Առաջինը՝ Հին աշխարհի պատմությունն է: Ինձ դուր է գալիս կարդալ այլ երկրների մասին, բայց ինձ դուր չեն գալիս բազմաթիվ «Ք.ա.-ները», որոնք տեղ են գրավել իմ գրքում: Մյուսը՝ Հայոց պատմությունն է, որն ինձ ավելի է հետաքրքրում, քան Հին աշխարհը, քանի որ սովորում ենք ոչ թե ուրիշ երկրի, այլ մեր երկրի մասին: Երրորդ առարկան դա Աշխարհագրությունն է, որն իմ անցած առարկաներից ամենաբարդն է: Այդ առարկայից ես ունենում եմ շատ հարցեր, որոնց պատասխանները չեմ գտնում գրքում:

Էլլա Խաչատրյան, 10տ.

Աշխարհագրություն

Ես շատ եմ սիրում իմ նոր առարկան՝ Աշխարհագրությունը: Սկզբում պատկերացնում էի, որ եթե անցնենք այդ առարկան, ապա ես

Լուսանկարը՝ Նորայր Բարոյանի, 16տ.

ոչինչ անել չեմ հասցնի: Բայց այնքան հեշտ էր, որ տասնհինգ րոպեում սովորում եմ դասը:

Ուսուցչուհին հետաքրքիր է անցկացնում դասը, և հոգնածություն չենք զգում: Նա ամփոփում է, ապա շարունակում խաղերի և քարտեզի միջոցով: Շատ ենք աշխատում քարտեզի վրա, իսկ շարունակությունը արդեն լինում է «Ի՞նչ չի ասվել դասից» հարցը: Աշխարհագրության դասերն անցնելով ավելի ու ավելի եմ սիրում այն:

Լիլիթ Վարդանյան, 12տ.

Հին աշխարհի պատմություն

Ամռանը ինձ համար գնեցին Հին աշխարհի պատմության դասագիրք: Ես այն ամբողջությամբ ընթերցեցի: Մտածում էի, որ եթե կարդամ, բոլորից լավ կպատասխանեմ դասերը: Դասագիրքը շատ հետաքրքիր է, խոսք չկա: Քանի որ ես ռուսական դասարանում եմ սովորում, դասը պետք է ռուսերեն լիներ, սակայն ուսուցչուհին դասը սկսեց բացատրել հայերենով, հետո էլ պարզվեց, որ ռուսերեն շատ վատ է խոսում: Ես սկսեցի ձանձրանալ Հին աշխարհի պատմության դասերին և հիմա ատում եմ այն:

Տաթևիկ Տեր-Հովհաննիսյան, 11տ.

ՆԶՊ և Հասարակագիտություն

Մենք այս տարի անցանք երկու նոր առարկա, դա ՆԶՊ-ն էր և Հասարակագիտությունը: Ես սպասում էի, որ ՆԶՊ-ի դասին մենք պետք է գնանք զորամաս և տեսնենք, թե ինչպես են զենք հավաքում և առավոտյան վազում մեր զինվորները, ինչպես է անցնում ծառայությունը:

Առաջին դասին ուսուցիչը մտավ և բարձր ձայնով ճչաց:

-Դասարան, ոտքի:

Ոչ ոք չկանգնեց, իսկ երբ նորից բղավեց, բոլորս վեր թռանք վախից:

-Ողջույն ձեզ:

Իսկ մենք ցածր ձայնով ասացինք.

-Ողջույն, պարոն գնդապետ:

-Զգաստ,- հրամայեց ուսուցիչը:

Եվ բոլորը հոգնած-տանջված զգաստ կանգնեցին: Ուսուցչին դուր չեկավ, թե ինչպես ենք մենք զգաստ կանգնում, բարևում:

Նա բարկացավ և հրամայեց արագ կատարել բոլոր հրամանները: Հասարակագիտության մասին ես էլ չեմ խոսում: Այն շատ հետաքրքիր էր, քանի որ առաջին դասին մենք խոսում էինք հասարակության մեջ մարդկանց դրսևորման մասին: Բայց երկրորդ դասին ոչ ոք դաս չէր սովորել և դաս չէր լսում:

Տատյանա Սաֆարյան, 12տ.

«Սիրում եմ անընդհատ նոր բան սովորել»

Այսօր «Մանանա» կենտրոնի հանդիպումների ակումբը հյուրընկալել է Panarmenian.net լրատվական կայքի փոխտնօրեն, Tedex Armenia կոնֆերանսների կազմակերպիչ, «Մանանա» կենտրոնի նախկին սան Արփինե Գրիգորյանին: Արփինեն նաև թրեյնինգներ է վարում տարբեր կազմակերպությունների համար, մեծ մասամբ, տեխնոլոգիաների հետ կապված թեմաներով, սեփական խորագիրն ունի «Խաբարբզիկ» հանդեսում:

-Քանի՞ տարեկան էիք, երբ սկսեցիք հաճախել «Մանանա»:

-Մոտ 12-13 տարեկան էի: Երբ առաջին անգամ եկա «Մանանա», ինձ հանձնարարեցին ինչ-որ բանի մասին գրել, որ իմանան՝ արժանի՞ եմ շարունակել գալ, թե ոչ, որովհետև այն ժամանակ կենտրոնը մի փոքրիկ սենյակում էր, և տեղը սահմանափակ էր: Ես գրեցի փոքրիկ շարադրություն «Ճագար Աշոտը» վերնագրով, որում պատմվում էր, թե ինչպես մուտքի մոտ գտանք ճագար Աշոտին և սկսեցինք պահել: Հենց այդ շարադրությամբ էլ ես դարձա «Մանանայում» հայտնի: Սկզբում միայն լրագրության ստուդիա կար, հետո բացվեցին ֆոտոյի, կինոյի ստուդիաները, իսկ 2001 թվականին համակարգչային հմտությունների և վեբ-դիզայնի ստուդիան, որը ես էի բացել և մոտ յոթ տարի այնտեղ դասավանդում էի:

-Պատմեք այն ժամանակվա «Մանանայի» մասին:

-Այսօրվա «Մանանայից» տարբերվում էր ժամանակների տարբեր լինելու և տեխնոլոգիաների զարգացմամբ միայն, իսկ մնացածում նմանությունները շատ են: Հավաքվում էինք մի սենյակում և նյութեր գրում, ծանոթանում մեդիայի տարբեր բնագավառներին: Այդ ամենի շնորհիվ բոլորիս հետաքրքրության շրջանակները ընդլայնվեցին, օրինակ, մինչև «Մանանա» հաճախելը ես չէի մտածում, թե ինձ կարող է լուսանկարչությունը կամ կինո նկարելը հետաքրքրել, նույնիսկ ուզում էի լրագրող դառնալ, բայց ծնողներիս հետ երկար պայքարից հետո ընդունվեցի Պոլիտեխնիկական ինստիտուտ, քանի որ համակարգիչներ էլ էի շատ սիրում: Կարծում եմ, ճիշտ որոշում էր: Համալսարան ընդունվելու ժամանակ սկսեցի պարապել ֆիզիկա և մաթեմատիկա ու անվճար ընդունվեցի Կոմպյուտերային համակարգեր ֆակուլտետի ծրագրավորման բաժին՝ համակարգչային պաշտպանություն մասնագիտացմամբ, որը ժողովրդի մեջ ավելի հաճախ «անտիհակեր» են անվանում:

-Որտեղի՞ց եք սկսել ձեր կարիերան:

-«Մանանայից»: Արդեն առաջին կուրսում սովորելու ժամանակ ես «Մանանայում» բացեցի համակարգչային խմբակ: Այն ժամանակ ես էլ քիչ բան գիտեի, տանը ինչ-որ գրքեր էի կարդում, հետո գալիս, երեխաներին դրանք

սովորեցնում, իսկ հետագա խմբերին դասավանդելու ժամանակ ինձ արդեն մասնագետ էի զգում: Բակալավրիատը ավարտելուց հետո ընդունվեցի «Sharm» ընկերություն որպես վեբ-ծրագրավորող: Այդ գործում պահանջվող գիտելիքները համալսարանում չէինք ստանում, իսկ աշխատանքի ընդունվելու ժամանակ մեծ նշանակություն ուներ փորձը, որը ես «Մանանայում» էի ձեռք բերել: «Sharm»-ում երկու տարի աշխատելուց հետո մեր բաժինը՝ «Yerevan Production»-ը, տեղափոխվեց, որը «Sharm»-ին կից ընկերություն էր: Արդեն այն ժամանակ ես հասկացել էի, որ ծրագրավորումն ինձ այնքան էլ հետաքրքիր չի՝ չնայած, շատ էի հմտացել այդ գործում: Ուզում էի մի աշխատանք, որը մարդկանց հետ շփմանը ավելի մեծ տեղ է հատկացնում: Այնպես ստացվեց, որ ես առաջխաղացում ունեցա, և ինձ նշանակեցին ծրագրավորողների խմբի ղեկավար: «Yerevan Production»-ը մեդիա ընկերություն էր, որն իր մեջ ներառում էր ֆոտոստուդիա, ամսագիր, դիզայնի, երաժշտական ստուդիաներ, և այնտեղ ինձ շատ պետք եկան «Մանանայում» ձեռք բերած գիտելիքները: Այդ ժամանակ «Sharm»-ում աշխատելուց, «Մանանայում» դասավանդելուց և մագիստրատուրայում սովորելուց բացի ես ընդգրկվեցի AIESEC միջազգային երիտասարդական կազմակերպությունում, որտեղ թրեյնինգներ էի անում և օգնում կոնֆերանսներ կազմակերպել: AIESEC-ում դարձա ինֆորմացիոն համակարգերի փոխտնօրեն: Որոշ ժամանակ անց ինձ հրավիրեցին կազմակերպության գլխամաս՝ Ռոտտերդամ, որտեղ ապրեցի և աշխատեցի երեք ամիս: AIESEC-ում աշխատեցի երկու տարի, հետո ընդունված կարգով, դուրս եկա՝ մյուս աշխատողներին զարգանալու տեղ տալու:

-Ե՞րբ եք ընդունվել «Panarmenian.net»:

-«Yerevan Production»-ից հետո: «Panarmenian.net»-ում աշխատելու ժամանակ ես նաև փորձեցի ընդգրկվել «Ted» կազմակերպության մեջ: Սկզբում չհաջողվեց, բայց, ի վերջո, ես գնացի այնտեղ որպես մասնակից, իսկ երկրորդ անգամ արդեն որպես թարգմանչական խմբի անդամ: 60-70 թարգմանություն անելուց հետո ես ընդգրկվեցի «Tedex Yerevan» թիմի մեջ:

-Ձեր կարծիքով ո՞րն է «IT» ոլորտի աշխատողների հաջողության գաղտնիքը:

-Իմ կարծիքով, նրանց հաջողության պատճառն այն է, որ այդ մարդիկ անընդհատ փորձում են և, եթե որևէ բան չի ստացվում, դարձյալ զրոյից են սկսում: Այսինքն, մասնագետները կարողանում են սխալի առկայության դեպքում միանգամից չհանձնվել, այլ գտնել սխալը և փորձել ուղղել:

-Ապագայի վերաբերյալ ի՞նչ պլաններ ունեք:

-Հաստատ ասել չեմ կարող, բայց ինձ դուր է գալիս նոր բաներ սովորելը: Երևի զարմանալի կթվա, բայց վերջերս սկսել եմ կարել սովորել և իմ առաջին ծրագիրն իմ սեփական հարսի զգեստն է լինելու՝ չնայած որևէ փորձ այդ գործում չունեմ: Նաև ինձ դուր է գալիս դասավանդելը, դրանով ես համ ուրիշներին եմ օգնում, համ էլ ինքս եմ թեմայի մեջ խորանում:

-Ինչո՞վ է Ձեր ստացած կրթությունն օգնում Ձեր ներկայիս աշխատանքին:

-Ճիշտ է, ես հիմա տեխնիկական գործով չեմ զբաղվում, բայց երբեք չեմ նեղվում որևէ կոդ բացել, բզբզալ կամ, ենթադրենք, մեր նոր կայքը կառուցողը ինձ չի կարող մոլորեցնել՝ ասելով, թե որևէ բան հնարավոր չի, որովհետև ես այդ գործի նրբություններին լավ տեղյակ եմ:

-Կա՞ որևէ բան, որի համար Դուք զղջում եք:

-Եղավ մի պահ, երբ լրջորեն մտածեցի իմ կյանքի տարբեր փուլերի մասին, հասկացա, որ այս ողջ ընթացքում, ինչ կատարվել է ինձ հետ, ուր հաճախել եմ, ինչ սովորել եմ, ոչ մի բան պատահական ու անիմաստ չի անցել:

Հարցազրույցը գրի առավ՝
Ալեքսանդր Սարգսյանը, 15տ.
Լուսանկարները՝
Դիանա Շահբազյանի, 16տ.

Սամվել Պետրոսյան

Մենախոսություն՝ քանդակելիս

-Քանդակագործի՝ Աստծու տված շնորհքը ընդհ է, որ ժողովրդի սիրած կերպարները նույնքան ջերմությամբ ու նույնքան կենդանի իրան վերադարձնես: Ամեն մե արձանը, որ դրվում է մեր քաղաքում, մի երևույթ է, ու կապ չունի ինչըղ է էրած, կարևորը էն է, որ ինքը իր մեջ ինչ-որ դաստիարակչական բնույթ ու իմաստ ունի:

Ինչըղ կըսե Կոմիտասը, եթե շնորհք ունիս, ժողովրդի տվածը բըդի իրան վերադարձնես: Ու ինչըղ ինքը ժողովրդից վերցրեց շատ երգեր, մշակեց, կատարելագործեց ու ժողովրդին տվեց, ըդպես էլ ես ժողովրդի ծոցից ելած կերպարներին գուզեմ, օր նույն համ ու հոտով, լեննագանցու ըսած՝ ջիգյարով ներկայացնեմ: Ու ես հոգևոր բավականություն կստանամ, երբ օր մեր հանճարների քանդակները շատ կենդանի կեղնին: Եվ իսկականից մեծ պատիվ է, երբ կծառայես մեծերին:

Բայց նաև շատ բարդ է քանդակագործի աշխատանքը, որովհետև մենակ արտաքին նմանությունը հերիք չէ. բըդի ներքին նմանությունն էլ գտնիս, գտնիս էդ մարդու ֆունկցիան: Ըդոր համար շատ էսքիզներ կենեմ, մինչև որ կգտնիմ իսկականին ամենամոտը ու բնականը: Մեր Սասունցի Դավթի արձանի հեղինակը՝ Երվանդ Քոչարը, երկար ժամանակ մտածել է, թե ինչըղ քանդակե, ու ինչ-որ բան չի հերիքել իրա ուզածը ստանալու համար, ու ինքը գնացել է գազանանոց, լսել է առյուծի մռնչյունը ու էն ամենը, ինչ-որ զգացել է, դրել է արձանի մեջ:

Քանդակով ես զբաղվել եմ 12 տարեկանից: Հլը էն ժամանակ 3-4-րդ դասարան էի, կերթայի մեր էսօրվա Մայր Հայաստանի արձանի մոտից, որը հլը գոյություն չուներ, կավ կբերեի էդ մեծ-մեծ քարերի տակից: Ու տնեցոնք էլ խաբար չէին եղնի, մեկ էլ ես կավը ուսիս գուկայի տուն, օր մե նոր կերպարըմ ստեղծեի: Ու էն ժամանակվա քանդակներս էլ շատ-շատ բնական են: Ես հըմի կնայեմ ու ընձի-ընձի կմտածեմ, օր էրեխա-էրեխա, լավ էլ նմանեցրել ու բնականին շատ մոտ քանդակել եմ մեր Վարդան Մամիկոնյանին, Հովհաննես Թումանյանին, շատ-շատերին: Ու բանն էլ էն է, օր ես ընձի եմ էրե էդ ամեն ինչը՝ առանց դասատու, առանց գործից հասկցող որևէ մեկի:

-Ռոդենը կըսե, եթե արձանին ձեռք կուտաս ու կզգաս արձանին, ուրեմն ինքը կենդանի է: Ես էն ժամանակ, երբ որ առաջին անգամ տեսա Սամվելի աշխատանքները, էնքան բնական էին, որ անկախ ինձանից ուզեցի ձեռք տալ, որ տեսնեի՝ կենդանի է, թե՝ ոչ,- զրույցին է միանում քանդակագործ Սամվել Պետրոսյանի կինը,- բայց ինքը ընձի կըսեր՝ մեջն ի՞նչ կա, չի խոսա:

Ես Սևակին (ցույց տվել եմ, չէ՞) գագաթ եմ էրե, որովհետև իրոք ինքը գագաթ էր: Ու չէի կըրնա ամենալավ կերպով չներկայացնեի, որովհետև իմ ամենասիրած ու հոգեհարազատ կերպարներին, ու հատկապես Նարեկացուն ու Սևակին, ես միշտ գուզեմ, օր ամենալավ ձևով ստեղծեմ, որովհետև մեր դյուցազներգության պես, ինչքան ստեղծես՝ կստեղծվին:

Արվեստագետը, եթե մտածող

չեղավ, բան դուրս չի գա, որովհետև բըդի ամեն ինչ իրար կապե ու լավագույնը գտնի, թե չէ մակերեսային՝ դիլետանտ կեղնի: Արվեստը ֆորմա է, ու դու քու փիլիսոփայությամբդ բըդի կըրնաևաս էդ ֆորման լցնես, լիքը դարձնես:

-Սամվելը շատ շուտ կոգեշնչվի: Հանկարծ մե կերպարըմ հանդիպավ, ինքը անմիջապես կսկսե մտածել էդ կերպարի վրա, ու ըդոր համար էլ իրա միտքը միշտ զբաղված է: Շատ ժամանակ ես կխոսամ-կխոսամ, բայց գիտեմ, օր ինքը ընձի չի լսե, իրա միտքը ինչ-որ նոր բան կստեղծե,- ասում է քանդակագործի կինը,- իրան դու երբեք պարապ չես տեսնի: Անընդհատ թուղթ ու մատիտը ձեռքը ինչ-որ բաներ կգծե, շատ ժամանակ նկարածը ցույց կուտա ու կհարցնե, թե որ մեկն է լավը: Ինքը չափից դուրս մոնումենտալ է:

-Դու քանդակը ընբես բըդի էնես, օր միջավայրի ճարտարապետության հետ հնչե ու մեծ արժեք ունենա:

Համ էլ քանդակագործը բըդի շատ կարդացած էղնի: Օրինակ, հունական, ասորական, եգիպտական, իտալական մշակույթին բըդի տեղյակ էղնի, օր իրա քանդակները կըրնաևա ճիշտ ստեղծե: Ես էլ շատ գործեր ունիմ, օր էդ ոճերով են քանդակված, բայց դե դու քու ազգային ձևով բըդի ստեղծես քանդակդ: Ես կհիշեմ՝ մեր մանկավարժական ինստիտուտի գործերն օր կենեի, Նարեկ Սրբազանը եկավ, տեսավ ու ըսեց. «Նայողը կզգա, օր հայի ձեռ է կպե: Ոչ իտալական է, ոչ հունական. այ, էդ է հայի արվեստը»:

Կըսեն՝ առյուծը կազմված է մարսված ոչխարներից: Այսինքն, բըդի էդ բոլոր արվեստները ուսումնասիրես, գիտենաս ու քուգդ ստեղծես:

-Էս էլ Ազնավուրս, Չարենցս, Սևակս, Խորենացիս, Տիգրան Մեծս, Նալբանդյանս, Դուրյանս, Գոշս… Կոմիտասս ու Քրիստոսս...

Եվ բառերով չի կարելի նկարագրել այն հիացմունքն ու սերը, որը տեսանելի էր քանդակագործի աչքերում, այն ոգևորությունը, որը նա զգում էր արձանները ցուցադրելիս ու ոչ պակաս ոգևորությամբ էլ վարակում ինձ, քանի որ անգամ փոքր արձանների մեջ զգացվում էր մեր մեծերի մեծությունը…

Մենախոսությունը գրի առավ Լեյլի Թադևոսյանը, Գյումրի, 16տ.
Լուսանկարները՝ հեղինակի

25 տարի առաջ

Ես և իմ սերնդակիցները չենք տեսել 1988-ի ահավոր ու աղետաբեր երկրաշարժը: Սակայն Գյումրիում դեռ շատ կան երկրաշարժից ավերված շենքերի փլատակներ, որոնք ամեն օր հիշեցնում են մեզ 25 տարի առաջ տեղի ունեցած ողբերգության մասին: Բացի այդ, այնքան շատ են պատմել, որ թվում է, թե ես եղել եմ ականատես: Տատիկս համարյա ամեն օր հիշում է դեկտեմբերի 7-ը: Բայց ավելի տխուր են այն հիշողությունները, որոնք կապված են աղետից հետո փլատակված քաղաքում ապրելու հետ: Մի դեպք տատիկիս մեջ շատ է տպավորվել: «Երկրաշարժից այնքան էինք վախեցած, որ մի փոքրիկ առիթ էր պետք նորից սարսափի մեջ ընկնելու: 1989 թվականի հունվարի 25-ից մեր դպրոցը սկսեց գործեց վրանների մեջ,- պատմում է տատիկս, որը թե այն տարիներին, թե հիմա դասավար է աշխատում դպրոցում,- Գրատախտակը հարմարեցրել էին վրանում: Գարուն էր, սկսվել էին ուժեղ քամիները, բոլորը խոսում էին, որ իբր նորից ավելի ուժեղ երկրաշարժ է լինելու... Ամեն ձայնից իրար էինք խառնվում:

Աշակերտներին հանձնարարություն տալուց հետո նստեցի դասամատյանը լրացնելու: Ու հանկարծ լսեցի երեխաների ոտնաձայներ՝ թփթփոցներ: Ինձ թվում էր, թե ես արդեն գետնի տակ եմ, երեխաներն էլ են ընկնում անդունդը:

Այդ պահին մի փոքրիկ աղջիկ՝ Սյուզաննան, գոռաց.

-Ո՞ւր եք վազում, ընկեր Անանյանը մնաց գրատախտակի տակ:

Ես բացեցի աչքերս, հասկանալով, որ գրատախտակն է պոկվել ու ընկել ինձ վրա:

Ինձ թվում է՝ բոլորին հասկանալի կլինի երկրաշարժի թողած ազդեցությունը մարդու վրա: Անցել է արդեն 25 տարի, չեմ մոռանում այդ աղետալի օրն ու ժամը: Ուզում եմ, որ ոչ մի սերունդ չտեսնի աղետ, ոչ մի մարդ վախեցած չապրի իր կյանքը»:

Սաթեն Վարդանյան
Գյումրի, 17տ.

Լուսանկարը՝ Տաթևիկ Հարությունյանի

Լուսանկարը՝ Տաթևիկ Հարությունյանի

Լուսանկարը՝ Լաուրա Գրիգորյանի, 14տ.

Ինչն է ինձ հուզում

Եթե լավ սովորեմ

Այս կյանքում ինձ շատ հուզող հարցեր կան: Ինձ շատ հուզում է իմ ուսումը: Ուզում եմ շատ լավ սովորել, շատ աշխատասեր լինել: Ինձ հուզում են իմ ցածր գնահատականները: Սակայն, հուսով եմ, որ այս տարի կուղղեմ դրանք:

Լիլիթ Բուլանյան
Ճամբարակ, 13տ.

Ոչ թե ինչ, այլ՝ ինչպես դառնալ...

Կրթության վարձավճարների բարձր լինելու պատճառով շատ շնորհալի և խելացի երեխաներ չեն կարողանում ուսում ստանալ: Իմ շրջապատում նույնպես կա այդպիսի աշակերտուհի: Չնայած նա կարող էր բուհում սովորել, բայց դպրոցն ավարտելուց հետո փնտրում է աշխատանք: Մարզերում շատ են այդպիսի պատանիները: Նրանք բոլորն էլ կարող էին լավ մասնագետներ դառնալ, ինչը օգտակար է երկրին: Իսկ հաճախ ուսանող դառնում են նրանք, ովքեր կարող են վճարել: Սարսափելի է անգամ պատկերացնել, թե ինչպես են գիտելիք ստանալու ձգտում չունեցող ապագա բժիշկները բուժելու հիվանդներին:

Մերի Բորյան, գ.Թթուջուր, 15տ.

Ազատ ժամանցը՝ պարապություն

Իմ գյուղում չկան մշակութային կենտրոններ: Իմ հասակակիցները չունեն զբաղմունք, և շատ ձանձրալի է անցնում գյուղի կյանքը: Ես հաճախում էի պարի, սակայն, դա երկար չտևեց: Դրանից ես շատ տխրեցի, որովհետև շատ եմ սիրում պարել: Իմ ընկերուհին հաճախում էր դաշնամուրի, սակայն, մեր գյուղում չէ, այլ Ճամբարակ քաղաքում: Նա գնում էր Ճամբարակ պատահական մեքենաներով: Մանավանդ ձմռանը շատ էր դժվար: Իմ հասակակիցների շրջանում կան երեխաներ, ովքեր գնացել են նկարչական խմբակի, բայց դարձյալ Ճամբարակում: Ես շատ կցանկանայի, որ մեր գյուղ մասնագետներ այցելեին և խմբակներ բացեին: Ես վախենում եմ, որ հետագայում իմ հասակակիցները իրենց կյանքից շատ կձանձրանան և կթողնեն գյուղն ու կգնան:

Սյուզաննա Խառատյան
գ.Վահան, 16տ.

Որտեղ կլինեմ վաղը

Հայաստանի դժվար պայմանների և գործազրկության պատճառով մեծանում է արտագաղթողների և արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Իմ հայրիկը չկարողանալով աշխատանք գտնել, իր ձեռքով հիմնեց սեփական խանութ: Սակայն մարդիկ աղքատ են Ճամբարակում, և խանութից միայն ամենաանհրաժեշտ բաներն են գնում, այն էլ՝ պարտքով: Հայրս ստիպված մեկնեց արտագնա աշխատանքի: Վերջին շրջանում մեր տանը պտտվում են խոսակցություններ ընտանիքով այլ երկիր տեղափոխվելու մասին: Ես չեմ ցանկանում լքել իմ ընկերներին, հարազատներին և, ի վերջո, հայրենիքս: Սակայն, միևնույն

Լուսանկարը՝ Նատալյա Թիզյանի, 17տ.

ժամանակ, հայրենիքս չի ստեղծում նպաստավոր պայմաններ՝ բարեկեցիկ կյանք ունենալու համար:

Սերինե Հարությունյան
Ճամբարակ, 16տ.

Ոչինչ հեշտությամբ չի տրվում

Ինձ հուզում է իմ ապագան, քանի որ յուրաքանչյուր քաղաքացու ցանկությունն է՝ ունենալ լավ մասնագիտություն և աշխատանք: Բայց, ցավոք, այսօր ոչ բոլոր մասնագետները ունեն աշխատանք: Ճիշտ է, ունեն բարձրագույն կրթություն և փայլուն գիտելիքներ, դրա փոխարեն չունեն շատ գումար և լավ «թիկունք»: Ապագայիս հետ կապված շատ ծրագրեր ունեմ, որոնք աշխատում եմ քիչ-քիչ իրագործել: Ճիշտ է, բարձունքի հասնելը դժվար է, բայց ոչինչ էլ հեշտությամբ չի լինում:

Տաթևիկ Խաչատրյան
Ճամբարակ, 16տ.

Գյուղի հոգսը

Ինձ հուզում է մեր գյուղի սոցիալական վիճակը, որի հետևանքով մարդիկ լքում են գյուղը: Գյուղում շատ քիչ են աշխատատեղերը, գյուղացիների մի մասը գյուղատնտեսությամբ է զբաղվում, բայց ոչ բոլորն ունեն գյուղատնտեսական տեխնիկա և քչով մի կերպ բավարարվում են: Շատերն են ուզում լավ ապրել, սակայն, գյուղում շատ դժվար է, չի ստացվում: Մարդիկ լքում են գյուղը՝ աշխատանք գտնելու նպատակով, և հիմնականում չեն վերադառնում:

Վահագ Մարտիրոսյան
գ.Թթուջուր, 14տ.

Ես՝ ինքս

Կան մի շարք մասնագիտություններ, որոնք ես շատ եմ սիրում: Բայց այդքանից ես ընտրել եմ միայն մեկը: Ինձ թվում է, ես ծնվել եմ, որպեսզի դառնամ ռազմական բժիշկ, ավելի կոնկրետ՝ ռազմական հոգեբան: Շատ եմ սիրում զինվորների և ծառայության հետ կապված գործերը: Ես բնավորությամբ այնքան էլ խիստ չեմ: Երբ բարկանում կամ էլ բանավեճի եմ բռնվում, միանգամից հուզվում եմ: Դա իմ էության մեջ է, և հուսով եմ, որ այս մասնագիտությունը կփոխի նաև իմ բնավորությունը: Այնտեղ, որտեղ ես եմ ապրում, շատ են գործազուրկ մարդիկ: Եվ ես էլ չեմ կարողանա աշխատել այստեղ, քանի որ ռազմական հոգեբանի պահանջարկ չկա: Բայց ես չեմ ընկճվում: Ես ինքս աշխատատեղ կբացեմ: Կհիմնեմ իմ ընկերությունը: Ես աշխատատեղեր կբացեմ նաև ճամբարակցիների համար:
Եվ իմ քաղաքը ճանաչում կստանա: Բոլորը կցանկանան հետ վերադառնալ:

Մանե Սարգսյան
Ճամբարակ 14տ.

Հեռանում են

Ինձ շատ է հուզում արտագաղթի հարցը: Մենք պատմության և գրականության դասաժամերին ոգևորվում ենք մեր հայրենիքով, սակայն մոռանում ենք, որ իրական աշխարհն այլ է: Իմ դասընկերներից շատերի հայրերը գործազրկության պատճառով գնացել են օտար երկրներ՝ աշխատելու, փող վաստակելու համար: Ընկերներս չեն ստանում հայրական դաստիարակություն, սեր: Ես ցավում եմ, որ այդպես է, սակայն չեմ կարող ոչինչ փոխել:

Լիլիթ Մկրտչյան
գ.Վահան, 13տ.

Ինչ անել

Ինձ հուզում է մեր Ճամբարակի ոչ բարվոք վիճակը, չկան ժամանցի վայրեր, երիտասարդությունը գնալով քչանում է: Կցանկանայի՝ նոր դպրոցներ և մանկապարտեզներ բացվեին, կառուցվեին խաղահրապարակներ: Իսկ ամենաշատը կցանկանայի, որ աշխատատեղեր լինեին: Գործազրկությունը դառնում է արտագաղթի պատճառ:

Մարիաննա Գևորգյան,
Ճամբարակ, 15տ.

Լուսանկարը՝ Տաթևիկ Խաչատրյանի, 16տ.

Ավագ դպրոցը աշակերտների աչքերով

Քաղաքի մի ծայրից մյուսը

Երբ օրենք ընդունվեց ավագ դպրոցների մասին, ես այդ ժամանակ 8-րդ դասարանում էի սովորում: Ուղղակի սարսափելի էր թվում, թե ինչպես պետք է բաժանվեմ իմ դասարանից, թե ինչպես պետք է օգտվեմ երթուղայինից, և վերջապես ինչպես կընդունի ինձ իմ նոր շրջապատը: Դրական կողմերի մասին չեմ խոսի: Մեծ խնդիր է այն աշակերտների համար, որոնք ծայրամասում են ապրում, տրանսպորտը: Ես ինքս ապրում եմ ծայրամասում, և ինձ համար ամենամեծ խնդիրը դա է, հատկապես ձմռանը: Կամ երթուղային չի լինում, կամ եթե լինում է, արդեն դասից ուշացած ենք լինում: Երբ մտածում էին այս համակարգի իրականացման մասին, պետք է մտածեին նաև երթուղայինների խնդրի մասին և հատուկ դպրոցական ավտոբուսներ հատկացնեին: Եվ հետո, շատերի համար մեծ գործազրկություն ունեցող Վանաձորում այդքան էլ հեշտ չէ ամեն օր 200 դրամ հատկացնել աշակերտի տրանսպորտի համար, մանավանդ, եթե ընտանիքից դպրոց են հաճախում երկու կամ ավելի երեխաներ:

Արփինե Աղավելյան
Վանաձոր, 16տ.

Հին և նոր ընկերներ

Ավագ դպրոցում սովորելով՝ մենք ավելի խորն ենք ուսումնասիրում լեզուներ հումանիտար հոսքում, և դա շատ լավ է: Բայց մի կողմից էլ՝ վատ է, քանի որ մակերեսայնորեն ենք սովորում մյուս առարկաները: Սովորելով ավագ դպրոցում, մենք հեռանում ենք մեր հին դպրոցից, մեր հին ընկերներից, ուսուցիչներից: Սակայն ես ավագ դպրոցում սովորելով ձեռք բերեցի նոր ընկերներ: Շատ կցանկանայի, որ քաղաքում մեկ ավագ դպրոց լիներ, որպեսզի բոլորս միասին լինեինք, և ես նորից շփվեի իմ ընկերների հետ:

Տաթև Սարգսյան, 17տ.

Արդյո՞ք կրկնուսույցներ պետք չեն գալու

Մի համակարգ, ըստ որի ծնողները պետք է գումար չծախսեին կրկնուսույցների վրա, բայց... Տարբեր դպրոցներից եկած երեխաներ, մի դասարանում՝ 30 աշակերտ. կեսը ցանկանում է սովորել, կեսը՝ ոչ: Բայց, իհարկե, առավելություններ էլ կան: Դասավանդում են լավ ուսուցիչներ, աշակերտներին ներգրավում են հասարակական աշխատանքներում: Կարծում եմ, շատ երկար ժամանակ կպահանջվի ավագ դպրոցը իր անվանը համապատասխանեցնելու համար:

Սյուզաննա Քոսյան
Վանաձոր, 17տ.

Հանուն որակյալ կրթության

Ես մեր գյուղի դպրոցի յոթերորդ դասարանում էի սովորում, երբ իմացա Վանաձորի «Էվրիկա» ֆիզմաթ դպրոցի մասին: Ֆիզմաթի սան լինելու համար պետք է ընդունելության քննություններ հանձնել, ցանկությունը բավարար չէ:

Մի խոսքով, ես ընդունվեցի «Էվրիկա»: Երկու տարի ապրել եմ հորաքրոջս տանը, որը քաղաքի ծայրամասում էր գտնվում, և երկու տարի անընդմեջ երթուղայինով ամեն օր գնացել եմ դպրոց: Երկու տարի հետո եղբայրս էլ ընդունվեց մեր դպրոց: Որպեսզի մեր բարեկամներին շատ նեղություն չտանք, մենք ծայրամասից տեղափոխվեցինք քաղաքի կենտրոն և ապրում ենք վարձակալած բնակարանում: Ծնողներս գյուղում են, աշխատում են, որպեսզի մեր կարիքները հոգան: Ճիշտն ասած, դժվար է երկու դպրոցահասակ տղաների համար տանից հեռու, մենակ ապրել, սակայն մայրս ուզում է, որ մենք սովորենք ու նորմալ, կայացած մարդիկ դառնանք…

Սամվել Մքոյան, Վանաձոր, 16տ.

Լուսանկարը՝ Սամվել Մքոյանի, Վանաձոր, 16տ.

Լուսանկարը՝ Անի Խուդավերդյանի, 15տ.

Ինչն է ինձ հուզում

Ազատամուտ

Ինձ հուզում է իմ ծննդավայրի՝ Ազատամուտի անցյալը, ներկան և ապագան: Ազատամուտը հիմնադրվել է 1970 թվականին «Բետոնիտ» գործարանի աշխատողների համար: Ազատամուտը ավան էր, սակայն Սովետական Միության փլուզումից հետո Ազատամուտը դարձավ գյուղ, «Բետոնիտը» փակվեց: Դրանից հետո Ազատամուտի բնակիչները սկսեցին արտագաղթել: Ազատամուտից շատերը հեռացան: Մարդիկ, ովքեր մնացել էին, տուժեցին հայ-ադրբեջանական պատերազմի ժամանակ: Շատ-շատերը թողեցին իրենց ընտանիքները և գնացին պատերազմ: Շենքերի վրա երևում են ռմբակոծության հետքերը: Գյուղն անընդհատ ռմբակոծվում էր: Հրետակոծությունից շատերը զոհվեցին:

Բնակչության մեծ մասը մեկնեց արտագնա աշխատանքի, իսկ մյուս մասը որոշեց զբաղվել ածխագործությամբ: Մինչ օրս էլ նրանք այդ գործով են զբաղվում: Սակայն այդ կերպ նրանք աղտոտում են մեր գյուղով հոսող Աղստև գետը: Երեկոյան գալիս է մի պահ, որ գյուղի օդը պատվում է ծխով: Մոտակա գյուղերից մեր գյուղի շենքերը չեն երևում, քանի որ օդը պատված է ծխով: Ածխագործությամբ զբաղվողներն անտառից ապօրինի փայտ են կտրում: Մարդիկ գետի մոտակայքում տեղադրում են մետաղյա տակառներ, փայտը դրանց մեջ վառում, մի փոքր բոցավառվելուց հետո փայտի վրա ջուր են լցնում, մարում կրակը և այդ կիսաածխացած փայտը տանում, վաճառում: Այդպես են գոյատևում:

Տիգրան Չիբուխչյան, 16տ.
Էրիկ Բադալյան, 15տ.
գ.Ազատամուտ

Շատ պարզ մի երազանք. ջուր

Ինձ հուզում է իմ գյուղի՝ Լուսաձորի ջրի հարցը: Գյուղի մի քանի թաղամասերում չկա խմելու ջուր, մարդիկ դույլերով են կրում ջուրը: Ջուր չկա նաև այգիները ջրելու համար:

Անդրինա Անտոնյան
գ.Լուսաձոր, 13տ.

Ջուր չկա

Ջրի պակաս ունի նաև մեր գյուղը: Մեծ մասը խմելու ջուր բերում է գյուղի կենտրոնում գտնվող աղբյուրներից, որոնք բարակ են: Ծայրամասերում գտնվող բնակիչները դիմում են մեքենաների օգնությանը: Կանանց մեծ մասը դույլերով է ջուրը տուն տանում: Բացակայում է նաև ոռոգման ջուրը: Այգիները չորանում են, բերք չի լինում: Անգամ խնդիր է դառնում լողանալը: Ամեն ինչ բարդանում է հատկապես ձմռանը: Ցիստեռների մեջ ջուրը սառցակալում է: Փորձում են նոր ջրագիծ կառուցել, բայց դեռ արդյունքը չի երևում. ջուր չկա:

Սուսաննա Մարդումյան
գ.Սևքար, 16տ.

Պաղջրի ծանր օրերը

Մեր գետը՝ Պաղջուրը, գյուղի հպարտությունն է, զարդը: Այն հոսում է երկու ժայռերի արանքով: Երբ վերևից նայում ես, ասես ադամանդակուռ արծաթյա գոտի լինի: Առաջ գնում էինք գետ լողալու, բայց մարդիկ այնքան շատ էին, որ տեղ էլ չէր լինում: Իսկ հիմա ... Այն հսկա գետը դարձել է առու:

Եվ այս ամենի պատճառն այն մարդիկ են, ովքեր կառուցեցին երկու չարաբաստիկ ՀԷԿ-երը: Եվ սա դեռ քիչ չէ, ասում են մի քանիսն էլ պիտի կառուցեն:

ՀԷԿ-երի կառուցման հարցում ամբողջ գյուղը դեմ էր: Գյուղը շատ պայքարեց. ամեն օր ցույցեր, ընդվզումներ: Բայց, քանի որ ՀԷԿ կառուցողների թիկունքում իշխանավորներ էին կանգնած, ամեն ինչ ապարդյուն էր. գյուղը պարտվեց: Եվ Պաղջուրը սկսեց ցամաքել...

Աստղիկ Ղազարյան
գ.Գետահովիտ, 14տ.

Լուսանկարը՝ Անի Խուդավերդյանի, 15տ.

Շունը

-Ախ, Աստված իմ, տեսնես գոնե մի րոպե այս ձայնը կդադարի՞, թե՞ չէ… Ուֆ,- ասացի ես դժգոհ դեմքով ու գլուխս մտցրի վերմակի տակ:

Անցավ մոտավորապես կես ժամ, բայց այդ անտանելի հաչոցը չէր դադարում: Արդեն մի երկու շաբաթ էր, ինչ ես անընդհատ, ամեն գիշեր լսում էի այդ ձայնն ու չէի կարողանում գոնե մի րոպե աչք կպցնել: Հանկարծ հասկացա, որ վերմակը ինձ չի «փրկի» ու ապավինեցի բարձի օգնությանը՝ փորձելով սողալով մտնել նրա տակ, բայց ոչ… Դա էլ չօգնեց: Վերջապես ընդունեցի այն միտքը, որ ես այս գիշեր ևս չեմ քնելու, ինչպես նախորդ և վերջին մի քանի օրերը ու քնատ շարժումներով վեր կացա անկողնուց: Իմ ստեղծած աղմուկից արթնացավ տատս, որ պառկած էր կողքի մահճակալին, ու անհանգստացած տոնով ասաց.

-Հը՞, բալես, ի՞նչ ա էղել, ինչի՞ չես քնում:

-Ուֆ՜տատի, մի ասա, հա՞, խնդրում եմ: Արդեն մի երկու շաբաթ ա, ինչ ձեր տանն եմ, ու մի գիշեր անգամ չեմ քնել այդ ընթացքում,- ասացի ես՝ վերմակը բարկությամբ մի կողմ հրելով:

-Ընչի՞, բալես,- անհանգստացավ տատս,- կարո՞ղ ա տեղդ փափուկ չի:

-Չէ, տատի, ի՞նչ տեղ, է՜,- պատասխանեցի ես՝ քունս կիսատ մնացած երեխայի դժգոհությամբ,- էդ անտեր շունն ա մեղավոր, որ ամեն գիշեր պարտաճանաչ կերպով քունս խանգարում ա:

-Է՜, բալես, անտեր ա, բա ինչ ա,- ցավագին գլուխը թափ տվեց տատս,- դրա տերերն էլ թողին գնացին:

-Ո՞ւր, տատ, ո՞ւր,- անփույթ հարցրի ես, քանի որ այդ գիշերվա կեսին ինձ ընդհանրապես չէր հետաքրքրում այդ:

-Խոպան,- մի կերպ լսելի եղավ նրա բերանից:

Մի քանի րոպե լռություն էր: Հետո տատս, չգիտեմ ինչու, սկսեց հուզված տոնով պատմել այդ ընտանիքի պատմությունը: Ասում էր, մի տարի առաջ էր, որ գնացին Հայաստանից, որ ամեն ինչ ունեին, բայց գնացին, որ թողեցին իրենց տունը առանց ափսոսալու, իրենց շանը՝ առանց խղճի խայթի, ու հիմա մի տարի է՝ այս շունը ամեն գիշեր հաչում ու տերերին է կանչում, որ չի լքում տունը, որ հավատարիմ է: Ասում էր, որ ասում են, թե նրանք հայերեն էլ չեն խոսում, որ մոռացել են, որ հայ են, որ ինքը մեղադրում է, որ ինքը չի մեղադրում, որ այսպես, որ այնպես, որ…, որ…, որ…

-Տատ, տեսնես դրանք չե՞ն լսում էդ խեղճ կենդանու ձայնը,- հարցրի ես զգացված տոնով:

-Է՜, բալես, դրանք մի շան չափ հավատարմություն էլ չունեցան իրենց տանը, իրենց հայրենիքին, իրենց հող ու ջրին: Գնա, գնա, բալես, արդեն լուսանում ա,- վերջացրեց տատս դառը հեգնանքով ու դուրս եկավ սենյակից:

Այդ օրվանից անցել է երկո՞ւ… Չէ, չէ, համարյա երեք տարի: Հիմա ես էլի տատիկենց տանն եմ, ու հիմա էլի գիշեր է դրսում, ու լսվում է այդ նույն շան հավատարիմ ու անդավաճան հաչոցը… Չէ, չէ համարյա երեք տարի առաջ: Ու ամեն անգամ, երբ լսում եմ, թե այսինչը կամ այնինչը թողին, գնացին երկրից, բերանիս մի անկյունում սառում է այն նույն հեգնանքը, ինչ տարիներ առաջ տատիս մոտ, և ուղեղիս մեջ արձագանքում են տատիս խոսքերը. «Է՜, բալես, մի շան հավատարմություն էլ չունեցան…»:

Շուշան Հարությունյան,
ք.Հրազդան, 16տ.

Լուսանկարը՝ Արաքսյա Ալեքսանյանի

Սքայփը դասապրոցեսի լավագույն օգնական

-Լիլ, Աննան չեկա՞վ,- հարցրեց ընկերուհիս՝ Եվան:

-Զանգել եմ, ասաց կոմպն ա միացնում, հիմա կգա,- պատասխանեցի ես:

-Իսկ Աչը չի՞ գալիս:

-Չէ, իրա մոտ ինտերնետը լավ չի, ինքը ուշ կկպնի:

-Երեխեք, ես եկա,- լսվեց Աննայի ձայնը,- ասեք՝ ի՞նչ բացեմ, ու սկսենք, առանց էդ էլ չենք հասցնում:

-Կուրսի e-mail-ին ուղարկած կա, բաց ու քաշի,- հուշեց Եվան:

-Եվ, գիտես, չէ՞, դու ես կարդալու, էսօր կոկորդս մի քիչ ցավում ա,- զգուշացրեցի ես:

-Արդեն բացել եմ, դե, կարդացեք,- ինչպես միշտ շտապեցրեց Աննան:

Իմ ու ընկերուհիներիս նման խոսակցությունը կարող է շատերի համար տարօրինակ և անտրամաբանական հնչել: Մինչդեռ մեզ համար քննությունների օրերին այն ազդարարում է պարապելու սկիզբը: Պարապում ենք մենք միասին՝ չնայած ամեն մեկս իրենց տանն է նստած լինում: Իսկ դրա համար մեզ անհրաժեշտ է ընդամենը համակարգչի, ինտերնետի և Skype-ի առկայությունը: Վերջինս մեզ հնարավորություն է տալիս խմբային զանգի միջոցով միաժամանակ երեք-չորս հոգով իրար հետ խոսել (ճիշտ է, մենք ավելի շատ հոգով էլ ենք փորձել, բայց այդ դեպքերում զանգի որակը շատ է իջնում, երևի ինտերնետի թուլության պատճառով): Խառնաշփոթից խուսափելու համար, ամեն անգամ ընտրում ենք մեկին, ով այդ օրը կկարդա նյութը, իսկ մնացածները լսում են և իրենց հերթին հետևում տեքստին: Եթե կարդալիս ինչ-որ հարց է ծագում կամ մի բան անհասկանալի է, տեղում քննարկում ենք, եթե անծանոթ տերմին է հանդիպում, օգտվում ենք օնլայն բառարաններից, իսկ եթե որևէ հարցի պատասխան չենք գտնում մեր գրքերում, մեզ օգնության են հասնում Google-ն ու Wikipedia-ն: Ինչ վերաբերում է գրքերին, դրանք էլ մեզ մոտ ստանդարտ տպագիր գրքերը չեն: Գրեթե ամբողջ մասնագիտական գրականությունը՝ սկսած անտիկ ժամանակաշրջանի փիլիսոփաների գրքերից մինչև ժամանակակից հետազոտություններն ու հոդվածները, կարելի է գտնել էլեկտրոնային տարբերակով: Մեր դասախոսներից շատերն անգամ իրենց դասախոսություններն են մեզ էլեկտրոնային տարբերակով ուղարկում, դասի ժամանակ դրանք թելադրելու փոխարեն: Այդպես շատ ժամանակ ենք խնայում, թե դասախոսության, թե պարապելու ընթացքում: Չէ՞ որ word փաստաթղթի մեջ ընդամենը մի բառ փնտրելով, կարող ես գտնել այն հատվածը, որը քեզ անհրաժեշտ էր: Իսկ դասախոսության ժամը օգտագործում ենք ավելի հետաքրքիր թեմաներ քննարկելու համար:

«Բայց այդքան շատ համակարգչի առջև նստելը վնաս չէ՞ տեսողությանը»,- կհարցնեն ձեզանից շատերը: Մեր պատասխանը այդ հարցին հաճախակի ընդմիջումներն են. այդպես ոչ աչքերդ են հոգնում, ոչ էլ դու՝ շատ ինֆորմացիայից: Որպես հոգեբաններ, մենք մի քանի առավելություն էլ ենք գտել Skype-ով պարապելու մեջ: Նախ, խմբով կարդալը մեծացնում է պատասխանատվությունը: Եթե մենակ պարապելիս կարող էիր ծուլանալ, կարդալու փոխարեն ուրիշ բաներով զբաղվել, ապա այսպես դու գիտես, որ ընկերուհիներիդ պարապելը քեզանից է կախված, և եթե ուշանաս կամ չգաս կարդալու, նրանք էլ կտուժեն: Երկրորդը, այդպես ինֆորմացիան ընկալում ենք երկու տարբեր զգայարաններով միաժամանակ՝ տեսողական ու լսողական, այսինքն՝ հետո հիշելու հավանականությունը մեծանում է: Բացի այդ, միասին կարդալու ընթացքում նյութի վերաբերյալ քննարկումները, վեճերն ու կատակները օգնում են հետո ավելի խորը ու հիմնավոր հիշել կարդացածը: Ճիշտ է, փորձը ցույց է տալիս, որ երբեմն քննության ժամանակ կատակներն ավելի լավ ենք հիշում, քան բուն նյութը...

Մենք միշտ զարմանում ենք մեր այն համակուրսեցիների վրա, ովքեր սահմանափակում են իրենց գիտելիքները ընդամենը դասախոսության կոնսպեկտներով, մինչդեռ ինտերնետն ու ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս տասնապատիկ անգամ շատ իմանալու:

Մայրիկս հիշում է իր ուսանողական տարիները, երբ ստիպված էին իրար տանը գիշերել: Հաճախ ծնողները ոչ մի փաստարկ չէին ընդունում և կարծում էին, որ մենակ էլ կարող են պարապել: Մենք այդ խնդիրը չունենք՝ համ տանն ենք, համ էլ ընկերների հետ:

Լիլիթ Կարապետյան

Հնարավո՞ր է արդյոք սուտ չխոսել

Շատ հնարավոր է սուտ չխոսել: Կան մարդիկ, որոնք ընդհանրապես սուտ չեն խոսում: Լինում է, բայց, որ մարդիկ սուտ են խոսում: Օրինակ, ես մայրիկին սուտ ասացի, թե դասերս արել եմ, բայց նա իմացավ, որ խաբել եմ իրեն և բարկացավ ինձ վրա: Ես պատժվեցի և մեկ շաբաթ չգնացի բակ: Դրա համար էլ հասկացա, որ չի կարելի սուտ խոսել:

Ռուբեն Ջրբաշյան, 9տ.

Քանի որ ես չեմ սիրում ստել, շատ եմ նեղանում, երբ մի բան եմ ասում, ինձ չեն հավատում: Օրինակ, վերջերս իմ դասարանցին դասղեկիս ասաց, որ իբր ես մտել եմ իր պայուսակը և վերցրել իր գրքերն ու տետրերը: Սակայն, դա չէր համապատասխանում իրականությանը: Իրականում ես նրա գրչատուփից վերցրել էի իմ մկրատը, իսկ գրչատուփը ոչ թե պայուսակում էր, այլ՝ սեղանի վրա: Բայց դասընկերուհիս գիտեր, որ գրչատուփը սեղանին է եղել, ոչ թե պայուսակում: Իմ դասղեկը հավատաց նրան և ոչ թե ինձ: Այդ փաստը ինձ շատ էր նեղացրել: Մի քանի օր հետո, երբ համադասարանցիս կրկին փորձեց ինչ-որ բան ասել, այս անգամ դասղեկս սաստեց նրան, քանի որ պարզել էր, որ ես չէի ստել:

Անի Երզնկյան, 8տ.

Ինձ թվում է, թե ինչպիսին էլ լինի մարդը, նա իր կյանքում գոնե մի անգամ կստի: Օրինակ, մենք՝ երեխաներս, շատ ենք ստում: Հասկանում ենք, որ դա վատ է, բայց չենք կարողանում չստել: Մենք ստում ենք, երբ ուզում ենք ինչ-որ մեկի վրա լավ տպավորություն թողնել, մեկի դուրը գալ, ընկերանալ, ինչ-որ բան գողանալ և այլն: Ես ստել եմ միայն մեկ միլիոն երեք անգամ և զղջում եմ դրա համար: Ես ստել եմ իմ ամենամոտիկ ընկերներիս՝ Էրիկին, Գևորգին և Աննային: Նրանք սկսել են հաճախ ինձնից նեղանալ կամ չհավատալ: Էրիկն ինձ գրեթե չի խաբել, Գևորգն ու Աննան՝ նույնպես: Ես հիմա շատ եմ փոխվել և սկսել եմ ավելի քիչ ստել, չէ, գրեթե չստել: Ես շատ ուրախ եմ, որ այլևս չեմ ստում:

Աննամարի Հարությունյան,10տ.

Մենք՝ երեխաներս, շատ անգամ սուտ ենք խոսում: Ստում ենք մեր ընկերներին, երբեմն՝ ծնողներին: Բայց չէ՞ որ ոչ մեկին դուր չի գալիս, երբ իրեն ստում են: Ես շատ անգամ խաբել եմ իմ ընկերոջը՝ Դավիթին: Նա թլոշ է, և, երբ խոսում է, ես բան չեմ հասկանում: Երկու, երեք անգամ խնդրում եմ, որ կրկնի, միևնույն է, բան չեմ հասկանում և ստիպված պատասխանում եմ՝ այո, կամ՝ ոչ: Ես նրան չեմ հասկանում, դրա համար էլ ստիպված եմ ստել: Դա է իմ թերությունը: Բայց, ինչ արած, ուրիշ ձև չեմ կարող:

Դիանա Աթանեսյան, 9տ.

Իմ մայրիկը մի օր Թբիլիսիից գնել էր մի շքեղ, ուղղակի հիասքանչ գրիչ: Շատ գունագեղ ճտիկով գրիչ էր: Ես տարա այն դպրոց: Այդ գրչին աչք գցեց մեր դասարանի Ադրինեն: Դասամիջոցին նա եկավ ինձ մոտ և հարցրեց, թե որտեղից է այն, քանի գույն ունի և արդյո՞ք գիշերը լույս արձակում է: Ես բոլոր հարցերին պատասխանեցի և խոստացա, թե այդ գրիչը վաղը կնվիրեմ իրեն: Ադրինեն սպասում էր վաղվան: Եկավ վաղվա օրը: Դասամիջոցին Ադրինեն եկավ և ասաց.

-Ո՞ւր է այն գրիչը:

Ես ասացի.

-Ես քեզ այս գրիչը չեմ տա, հասկացա՞ր:

Նա տխուր գնաց և իր տեղը նստեց: Ես մյուս օրն առավոտյան հասկացա իմ սխալը և մի ուրիշ նվեր վերցնելով՝ գնացի, Ադրինեից ներողություն խնդրեցի: Նա ինձ ներեց և կարևորը ինձնից չնեղացավ: Մենք շարունակեցինք ընկերություն անել:

Աշխեն Վարժապետյան, 9տ.





Սուտ չխոսել հնարավոր չէ: Մի անգամ մայրիկիս ասել էի, որ ձեռքերս լվացել եմ, բայց իրականում չէի լվացել: Նա հասկացավ, որ մի բան այն չէ, և ես ներողություն խնդրեցի, իսկ մայրիկս ներեց ինձ:

Մայրիկս և հայրիկս միշտ ասում են, որ իրենք սուտ չեն խոսում: Ես չէի հավատում: Եվ մի օր ես հասկացա, որ միշտ չէ, որ սուտ չեն խոսում: Մի օր իմ ընկերուհիին ինձ հրավիրել էր իր ծնունդին: Ես չէի հասցնում, որովհետև շատ դաս ունեի, այդ ժամանակ մայրիկս իմ ուսուցչուհուն ասաց, որ ես գնալու եմ ատամնաբույժի մոտ, և սուտը մնաց սուտ:

Մարիաննա Հովսեփյան, 9տ

Ես և իմ ընտանիքը

Իմ անունը Տաթևիկ է: Ես սիրում եմ հորինել բանաստեղծություններ, նկարել, կարդալ, երազել և սովորել դպրոցում: Իմ ամենասիրելի առարկաները ռուսերենն ու մաթեմատիկան են:

Սիրում եմ մասնակցել «Ռուսական արջուկ» և «Կենգուրու» միջազգային մրցույթներին: Համարյա միշտ ստանում եմ մրցանակներ, երբեմն նույնիսկ գովասանագրեր:

Ես ունեմ քույրիկ: Նրա անունը Անի է, յոթ տարեկան է: Անին ծիծաղելի է նկարում: Ես և Անին սիրում ենք հորինել տարբեր ծիծաղելի պատմություններ և ուրախ հեքիաթներ: Միասին խաղում ենք, նայում մուլտֆիլմեր, զբոսնում:

Հանգստյան օրերին մենք ամբողջ ընտանիքով դուրս ենք գալիս հեծանիվ քշելու: Մենք քրոջս հետ հեծանիվ ենք քշում, մրցում իրար հետ կամ գտնում կտրուկ զառիթափեր:

Իմ ընտանիքը սիրում է ճանապարհորդել: Ամռանը ես, Անին և մայրիկը թռչում ենք Մոսկվա՝ տատիկի և պապիկի մոտ: Մոսկվայում գնում ենք թանգարաններ, պատկերասրահներ: Ուրախ ենք անցկացնում ամառը Մոսկվայում: Նաև սիրում ենք մեքենայով սարերում ճանապարհորդել: Այս ամառ մենք գնացինք Տաթև, Հաղպատ և Սանահին: Տաթևի ճանապարհին եղանք նաև Նորավանքում և Քարահունջում, իսկ Հաղպատի և Սանահինի ճանապարհին՝ նաև Ալավերդիում, Դիլիջանում և Սևանում: Հայաստանով ճանապարհորդելը շատ հետաքրքիր է: Ես եղել եմ նաև ԱՄՆ-ում՝ Չափլ-Հիլլում՝ իմ զարմիկների մոտ: Նրանք խոսում էին անգլերեն, և ես անգլերեն էի պարապում նրանց հետ խոսելով: Չափլ-Հիլլում խոնավ է, այդ պատճառով այնտեղ շատ են մոծակներն և մժեղները: Այգում՝ տան մոտ, վազում էին սկյուռներ, թռչում էին կարմիր ադմիրալներ և փոքրիկ կոլիբրիներ: Իսկ երբեմն երևում էին նաև եղնիկներ:

Ես և Անիշան եղել ենք օվկիանոսի ափին: Օվկիանոսում չի կարելի լողալ, որովհետև ալիքները շատ ուժեղ են: Ամեն օր օվկիանոսի վրայով թռչում էր գովազդային պաստառով ուղղաթիռ, իսկ նրա հետևից՝ հավալուսների երամ: Ահա, թե ինչ ենք մենք սիրում անել միասին:

Տաթևիկ Տեր-Հովհաննիսյան, 11տ.

Հինգ խորհուրդ բոլոր նրանց, ովքեր ուզում են սուտ չխոսել

1. Քո առաջ տիկնիկ դիր և խաղի մեջ վատ բան արա, իսկ քո տիկնիկին ճիշտն ասա: Այդպես անընդհատ, մինչև սովորես ճիշտն ասել:
2. Սկզբից պետք է մարզվել՝ ձեռքերը չլվանալով: Դու ձեռքերդ չես լվանում ու գալիս ես ծնողներիցդ ներողություն ես խնդրում: Դա կսովորեցնի քեզ համարձակ լինել և խոստովանել սխալը:
3. Դու վատ բան ես անում, ստում ես ծնողիդ, իսկ հետո ներողություն խնդրում: Այդպես՝ անընդհատ:
4. Սկզբից քո հին խաղալիքներից մեկը ջարդում ես և ասում ծնողիդ: Դա նրա համար է, որ ջարդված առարկաները չթաքցնես:
5. Խաղի մեջ ինչ-որ բան գողացիր և ստիր, որ դա դու չես վերցրել: Հետո գնա և վերադարձրու առարկան և ասա ճիշտը:

Դիանա Աթանեսյան, 9տ

Լուսանկարը՝ Լիլիթ Վարդանյանի, 12տ.

Բարև, ես Լեյլին եմ, կամ ինչպես սիրում են շատերը ասել՝ Լիլին: Սիրում եմ պարտաճանաչ մարդկանց և տանել չեմ կարողանում, երբ մարդիկ իրենց խոստումները չեն կատարում: Փորձում եմ, որքան հնարավոր է, չնմանվել նրանց: Ասում են՝ ստացվում է: Ընկերական եմ ցանկացածի հետ ու ինձ երջանիկ մարդ եմ համարում, որովհետև ունեմ շատ ընկերներ: Ամեն ինչի համար ժամանակ եմ գտնում ու փորձում եմ այն ռացիոնալ օգտագործել: Ամենից շատ սիրում եմ ընտանիքս ու շտեմարաններս: Նախասիրություններիս առաջին հորիզոնականում ֆուտբոլն է, առանց որի չեմ պատկերացնում օրս: Բնավորությամբ շատ համառ եմ ու միշտ փորձում եմ ամեն գնով հասնել նպատակիս: Պաշտում եմ իմ բարբառը և խոստացել եմ, որ ինչ էլ լինի, չեմ փոխելու այն: Շատ եմ զայրանում, երբ մարդիկ ավելի ժամանակակից երևալու համար փոխում են իրենց բարբառը և չեն էլ մտածում, որ նախկինից ավելի տգեղ են խոսում, չնայած՝ չեմ գտնում, որ աշխարհում տգեղ բարբառներ կան: Սիրում եմ ժպտալ ու դիմացինիս ևս ժպիտ պարգևել: Բայց ամենից շատ սիրում եմ փոքր եղբորս՝ չնայած ամեն օր կռվում ենք հասարակ բաների պատճառով: Էհ, ինչ ըսեմ, էս էլ ես...



Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի, 16տ.

Ամեն ինչ շարժվում է

Տեսնե՞ս՝ ինչ է կատարվում իմ դարակում, երբ ես քնած եմ: Մեզանից յուրաքանչյուրը երևի մտքում տվել է այդ հարցը ու ինչ-որ աներևակայելի բան պատկերացրել: Եթե շարժվենք երևակայական տրամաբանությամբ, ուրեմն, իմ դարակում իսկական աստղային պատերազմներ են լինում:

Երկու իրար զուգահեռ պատերին ապրում են «Ռեալ» Մադրիդ ու «Բարսելոնա» ֆուտբոլային ակումբների աստղերը, որոնք, ամեն գիշեր խաղում են միմյանց դեմ: Կամ էլ՝ Ջոն Լենոնն ու Մայքլ Ջեքսոնն ամեն գիշեր համերգ են տալիս...

«Ամեն ինչ կենդանանում է...»,- ինչպես ասվում է հայտնի «Գիշերը թանգարանում» ֆիլմում: Այո՜... Շատ հետաքրքիր է, միայն թե չեմ պատկերացնում, թե ինչպես են իրար հասկանում Անջելինա Ջոլին ու Միեր Մկրտչյանը, մանավանդ, որ հարևանությամբ Ջոննի Դեպն է... Երևի շատ հավես է ամեն գիշեր իմ դարակում, մանավանդ, երբ գիտնականները սկսեն միմյանց հետ բանավիճել, օրինակ՝ Մենդելեևը, Շարիգինը, Նյուտոնը... Ճի՛շտ է, նրանցից շատերը միևնույն դարաշրջանում չեն ապրել, բայց հաստատ ընդհանուր թեմա կգտնեն խոսելու, կամ էլ՝ ընդհակառակը:

«Երբ գիշերը գա, պայքարը կսկսվի, քանի որ ամեն ինչ կենդանանում է...»:

Երազել

Երևի բոլորն էլ երազում են, նույնիսկ այն ժամանակ, երբ չեն ցանկանում: Բայց ամեն դեպքում էլ պետք է երազել ու հավատալ երազանքների իրականացմանը: Չնայած, ես կարծում եմ, որ երազանքներին հասնելու համար չպետք է ձեռքերը ծալած նստել ու առանց ոչինչ անելու սպասել, որ երազանքներն իրականանան:

Ես շատ երազանքներ ունեմ, որոնց իրագործմանն անսահման հավատում եմ ու գիտեմ, որ իրականանալու են, թեկուզ ոչ հիմա, բայց թող կյանք առնեն ու ինձ էլ երջանկացնեն: Երազանքները մարդկանց հյուր են գալիս ամեն րոպե, և անգամ «ուզում եմ» բառը՝ նույնպես երազանք է: Երևակայությունը սահմանափակվում է այնքանով, որքանով մարդը հնարավորություն ունի կյանքի կոչել այսօր անհավանական թվացող երևակայականը:

Պետք է երազել, պետք է հավատալ և հուսալ, ապրել ամեն մի վայրկյանով, քանի որ իրականության ու երազանքների սահմանագիծն ընդամենը մեկ ակնթարթ է, որ կարող է փոխել իրականությունը: Երազել, բայց և միշտ հիշել Վիլյամ Սարոյանին. «Կըրնա ըլլալ՝ սա մեր կյանքի ամենալավ օրն է»:

Լեյլի Թադևոսյան, 17տ.

Թուխարը

Չոր խաշամը ոտքի տակ ճարճատում էր: Խաշամի տակ ծառի հին տարիների բարակ ճյուղի մնացորդներն են: Հեռվից լսվում էր ջրվեժի գիշերային ձայնը: Կամաց գծագրվում էր լեռան ուրվագիծը: Շաղի կաթիլները իրար միանալով մշուշ էին կազմում ու միանում գետակի մշուշին: Ջրեզերքին՝ մշուշի մեջ միայնակ նստածը իրենց գոմեշն էր՝ Թուխարը, հետո՝ Թուխարն էր իր մոր հետ, նորից՝ միայնակ Թուխարը: Սաթենիկը երանության մեջ արթնանում էր, արդեն քանի գիշեր կրկնվող երազն էր: Մանկությո՞ւնն էր կանչում, կորցրած տարինե՞րը, թե՞ ծերության անորոշությունը: Անդավաճան գոմեշը գուցե փորձում էր կյանքի վերջում գտնվողին երազներով օգնել: Թուխարն իր մանկությունն էր: Աստծո տված մայրական բնազդով փոքրահասակ աղջիկը կյանքը սկսել էր մայր Թուխարի ձագին մեծացնելով: Սաթենիկին ասես վիճակված էր ողջ կյանքում որբ մեծացնել: Չնայած եղբորից փոքր էր՝ մեծացրեց եղբորը՝ նրան մայր լինելով, տարիներ անց մեծացրեց եղբոր միայնակ որդուն՝ էլի մայր լինելով, ինքը՝ զրկված լինելով բնության տված ամենամեծ կոչումից՝ մայր լինելուց: Եվ հիմա օգնության հերթը Թուխարինն է, որի տեսակ գոմեշը միշտ հիշում է իրեն կերակրողին և երբեք չի մոռանում իրեն հարվածողին կամ վիրավորողին:

Թուխարը որբ էր և, եթե ինքը անհայր չլիներ, միգուցե այդքան որբորեն չզգար գոմեշի ձագի մենակությունը: Միգուցե չնեղանար մայր Թուխարից, որ իրենք առանց այն էլ շատվոր էին ու սոված, որ սևով գրված 37 թիվ էին տեսել ու այդ թվով որբացել, որ Սիբիր տանող գնացքից հայրը հասցրել էր ասել.

-Թուխարը ձագ պիտի ունենա, Թուխարին լավ կնայեք…

Մայր Թուխարը մի տուն էր, և իրենց որբությունը ծածկողն էր: Թուխարի շալակին 37 թիվն էր՝ երեխաների վզի ծռությունը, սովը, հողի վարը, սայլի քաշքը, իր առաջնեկ ձագին կրելը ու իր շնչով գիշերվա խավարը ցրողը: Պարզ էր, որ իրենք սոված էին, և գոմեշը իրենց պիտի տեր կանգներ: Բայց գոմեշը առաջին անգամ պիտի մայր դառնար: Չնայած նանի ամենօրյա թախանձանքին, թե՝ իմ ումուդը դու ես՝ գոմեշը չապրեց, ապրեց ձագը: Որբացած ձագին մորից միայն անունը բաժին մնաց՝ Թուխար: Ձագին մայր էր պետք, և մայրը դարձավ ինքը՝ չորսամյա աղջնակը: Մահացող մայր գոմեշից վերջին անգամ կերակրեցին ձագին, հետո երեխայի մատները դարձան ծծակ՝ սոված ժամանակ փոխարինելով կաթով լի շշին, որը նանը մատների արանքից ներս էր խցկում: Կաթին հետո փոխարինեցին կանաչ խոտն ու բոխու տերևները, հետո այդ մատները շոյանքի, թաքուն պահած քաղցրավենիքի ու գուրգուրանքի համար էին: Ձագը պիտի ապրեր: Մեծացան երկուսով՝ կիսելով ունեցած ուտելիքի փայաբաժինը: Մեծացան՝ հանդերում վազելով, Թուխարի բառաչը շրթին, զանգակը վզին: Հանդից վերադառնալով՝ գոմշավարի ծույլ շարժումը թողած, վազում էր տուն, չէր հանդարտվում մինչև Սաթենիկը չերևար: Նրա կողքին կանգնած յուրաքանչյուրին պոզերով խփում էր. Սաթենիկն իրենն էր՝ իր տերը, առավոտյան ճանապարհողը, երեկոյան վերադարձին սպասողը, իր զանգուլակի թելը հյուսողը, իր հետ միասին՝ հոր վերադարձին սպասողը, իր հեքիաթասացը: Հայոց աշխարհում ոչ մի կենդանու մասին այդքան երգեր չեն գրվել ու գովաբանվել, այդքան հորովելներ չեն երգվել: Թվացյալ ալարկոտություն, ծույլ, սև, մեծ գլուխ և աչքեր՝ մեծ, շատ մեծ աղերսանքով լի, և այդքան լուծընկեր լինելու ուժահատություն: Ոչ մի կենդանի գոմեշի հավատարմությունը չունի, ուր էլ լինի, նա պիտի տուն վերադառնա, և ոչ մի կենդանի նրա հիշաչարությունը չունի: Նման մարդկային տեսակին անվանում են գոմշանախանձ, որը լավ է գոմեշի համար, վատ՝ մարդու տեսակի համար: Գոմեշի համար հնչում է հավատարմության պես մի բան:

Տարիներ անց գոմեշին ծախեցին: Մի օր գոմեշը խռովել ու եկել էր հորանց տուն. ծեծն էր պատճառը՝ անհիմն ծեծը, քանի որ նոր տերերը չէին հասկացել, որ ինքը սիրով ու գուրգուրանքով պահված ու մարդավարի մեծացրած գոմեշ է: Նոր տերերը սովորական աչքով էին նայել, և գոմեշը խռովել ու հետ էր եկել, եկել էր աղերսն աչքերին, խնդրանքը՝ դեմքին, բառաչով աշխարհը լցնելով: Բայց թե հիմա ուրիշի տան սյուն էր, հետ տարան:

Հետ տարան դժվարությամբ՝ նանի երգը ականջին, շոյանքը մեջքին, արցունքախառն շշունջը դեմքին, հիշողությունն էլ աչքի առաջ: Հիշեց սայլին լծված մայր Թուխարին, սայլի վրա մի կարպետ ու մի խալի, հուրհրան գույներով վերմակի տակ պառկած մորը: Տանում էին հարևան գյուղի հիվանդանոց, իսկ իրենք կողքից քայլում էին: Գոմեշը գիտեր ճանապարհը, գոմեշը պիտի առողջ հետ բերեր իրենց մորը, չէ՞ որ գոմեշը իրենց որբությունը ծածկողն էր: Հիմա մայր Թուխարի ձագին՝ փոքրիկ Թուխարին հետ են տանում: Ճանապարհեց ամբողջ ընտանիքը, ինչպես ճանապարհում էին իրենց հորը: Իրենք իրենց ձեռքով պոկեցին իրենցից իրենց Թուխարին: Գութանը ի՞նչ պիտի իմանար, թե լուծ քաշողը ով էր՝ Թուխա՞րը, թե՞…

Ամեն մեկը ինքն է իր կյանքի լծաքարշը:

Կյանքի վերջում գտնվողի՝ Սաթենիկի վերջին բառերն էին.

-Անունը Թուխար էր:

-Ո՞ւմ անունը:

- Գոմեշի:

Ու վերջ: Մնացածը իմ հիշողությունն է, որ իրականության շարունակությունն է: Մենք վերցրել ու խտացրել ենք կարոտ բառը՝ անունը դնելով Գիքոր, և Գիքորի մեր տեսակը Թուխարն է: Գիքորի մեր տեսակի կարոտը սովորական կարոտ չէ՝ կարոտախտ է, որ չի բուժվում: Թուխարը իմ Գիքորն է, իմ՝ հիշողությունը, որը իրականության շարունակությունն է, իսկ իրականությունը 95-ամյա մայրս է, գնացել է գյուղ՝ գերեզմաններ, իմաց տալու մորը, որ իր քույր Սաթենիկը էլ չկա: Քույրս էլ, թե՝ Մամ ջան, մի վախի, Մամիկը (այսինքն՝ քեռիս) խաբար տված կլինի: Մայրս էլ, թե՝ չէ, աղջիկ ջան, ես պիտի գնամ, որ ասեմ: Լուսահոգի մայրս էն ժամանակ էլ չէր հավատում քեռուդ, ասում էր, որ շատ է սուտ խոսում: Ես գնամ իմ բերանով ասեմ:

Աստծո տված յուրաքանչյուր արարած Գիքորի վզի ետծռությունը ունի:

Սեդա Ջանվելյան

Մարիա Թերեզա Անդրուետո

2012 թ.-ի մանկապատանեկան գրականության Անդերսենի մրցանակը արգենտինացի գրող Մարիա Թերեզա Անդրուետոյին է շնորհվել: Անդրուետոն ծնվել է 1954 թվականին, գրում է ամենաբազմազան լսարանի համար, գրական գործերի մեծ մասն էլ հասցեագրված է երեխաներին և պատանիներին: Այլ կերպ չէր էլ կարող լինել. Մարիա Թերեզան երկար տարիներ ուսուցչուհի էր: Այժմ նա վարում է իր սեփական բլոգը, հոդվածներ է գրում լատինաամերիկյան գրականության մասին, վարպետության դասեր է տալիս, հանդես է գալիս դասախոսություններով… Հարցազրույցներում նա միշտ ընդգծում է, որ չի բաժանում իր լսարանը երեխաների ու մեծահասակների, կանանց ու տղամարդկանց, արգենտինացիների և ոչ արգենտինացիների: Գրականությունը բոլորի համար, գրականությունն առանց սահմանների՝ համոզված է նա: «Ես միշտ ձգտել եմ ընդգրկել ամեն բան, ուզում եմ հետազոտել բոլոր ժանրերը, գրել տարբեր խմբերի ընթերցողների համար: Արդյունքում, այդ որոնումները փլուզեցին իմ սեփական պատկերացումները սահմանափակումների մասին»:

Նրա ստեղծագործությունների մեջ շատ է «ոչ մանկականը»: Անդրուետոն գրում է մենության ու չհասկացված լինելու, աղքատության և գաղթականների խնդիրների, հիվանդությունների, ընկճախտերի և դժբախտությունների մասին: Ըստ գրողի՝ երեխաների հետ կարևոր բաների մասին պետք է խոսել այնպես, ինչպես մեծահասակների հետ, անգամ եթե խոսքը բարդ և տխուր հարցերի մասին է:

Անդրուետոն շատ է կարևորում ձևը, քննադատները նշում են, որ նրա գործերը շատ քնարական են: Իրենց մեղեդայնությամբ գրվածքներից շատերը հիշեցնում են բանաստեղծություն և ժողովրդական երգ:

-Մանկությանս տարիներին ես շատ ընտանեկան պատմություններ եմ լսել: Դրանք ոչ միայն բանավոր զրույցներ էին, այլ վեպի շարադրանքներ, իմ ընտանիքի անդամների պատմությունները, որոնցով ես ոգեշնչվում էի: Իսկ ինչ վերաբերվում է գրքերին, ապա ես շատ էի կարդում, նույնիսկ շատ վաղ հասակում: Բառարաններ, հանրագիտարաններ, տեղեկատուներ, քրեական քրոնիկոններ, սրբերի վարք, բանաստեղծություններ, որոնք դուր էին գալիս մայրիկիս, արկածային, սիրային վեպեր... Իսկ հետագայում, երբ ես 11-12 տարեկան էի, դպրոցական գրադարանում բացահայտեցի ինձ համար արգենտինացի գրողներին՝ Բորխեսին, Կորտասարին, Բիոյ Կասարեսային... Եվ սկսեցի նրանց կարդալ՝ գիտակցելով, որ մտնում եմ գրականության աշխարհը: Տասնյոթ տարեկանում ես ընդունվեցի համալսարան և ձեռք բերեցի ընթերցելու իմ ուրույն մոտեցումը, որը մինչ հիմա պահպանում եմ. ես իմ կարդացածը տեղադրում եմ գրական ավանդույթների համատեքստում, համեմատականներ եմ տանում տեքստի և այն ստեղծող հասարակության հետ:

-Ե՞րբ դու հասկացար, որ կարող ես լավ գրող լինել:

-Երրորդ դասարանում ես շատ ամաչկոտ էի, ուզում էի ընկերանալ աղջիկների հետ, բայց չգիտեի՝ ինչպես: Սկսեցի դասամիջոցներին նրանց պատմություններ պատմել, և շուրջս մի փոքրիկ խմբակ ձևավորվեց: Այն ժամանակ ես կարգին չէի հասկանում, թե ինչ է կատարվում, սակայն շատ տարիներ հետո գիտակցեցի, որ սա գրողական աշխատանքի մի հատված էր: Ես ամեն օր հանրագիտարանում, ձեռքիս տակ եղած գրքերի մեջ պատմություն էի որոնում, որ հաջորդ օրը պատմեմ նրանց: Օրինակ, ես պատմեցի նրանց Հռոմի հիմնադիր եղբայրների մասին, բայց այնպես, ասես ես ինքս էի դրանք հորինել, և նրանք հավատում էին, որովհետև այդ մասին ոչինչ չէին լսել: Ես իհարկե, հասկանում էի, որ խաբում եմ նրանց, սակայն կանգ առնել չէի կարողանում:

-Ինչո՞ւ որոշեցիր գրող դառնալ:

-Երբ մի բան լավ է ստացվում, երբ քեզ գնահատում են, ապա դու ուզում ես հետագայում էլ դրանով զբաղվել: Չէ՞ որ մենք բոլորս էլ ուզում ենք, որ մեզ սիրեն, այդպես չէ՞: Զարմանալի բան է, թե մեզ հետ ինչ կարող է անել սիրող հայացքը: Այդ իսկ պատճառով ինձ թվում է, որ շատ կարևոր է ծնողների, ուսուցիչների, մեծահասակների դերը, որոնք քո մեջ նկատում են որևէ տաղանդ: Ամեն դեպքում մենք բոլորս էլ մի բան լավ ենք անում և բազմաթիվ բաներ՝ վատ, այդպես չէ՞: Մի պատճառը սա է: Մյուսը՝ ես ապրում էի գյուղում, հասարակ ընտանիքում, իմ ծնողները ուսյալ չէին, ոչ էլ ինտելեկտուալ էին, առավել ևս, գրող չէին: Սակայն մենք տանը գրքեր ունեինք, և ծնողներս սիրում էին կարդալ:

-Գրող դառնո՞ւմ են, թե՞ ծնվում:

-Ոչ ոք ոչ մի բանի համար չի ծնվում, ավելի ճիշտ, բոլորը ծնվում

են ամեն ինչի համար: Երբ մարդը ծնվում է, ապա ամեն բան հնարավոր է դառնում: Իսկ հետագան ցույց է տալիս, թե մարդն ինչ է կարողանում, իսկ ինչը՝ ոչ: Ես կարծում եմ, գրողն ինքն է իրեն կերտում, ստեղծում: Իհարկե, յուրաքանչյուրի կյանքում, երբ շատ երիտասարդ է, կարող է պատահել ինչ-որ բան, որն առնչվում է խոսքին՝ մայրիկը մի պատմություն կանի, կամ հայրիկը ծննդյան օրը մի գիրք կնվիրի... Իսկ հետո, որոշակի մի պահի դու որոշում կկայացնես:

-Երբ գրում ես, ազատություն ես տալիս երևակայությա՞նդ, թե՞ հիմնվում ես իրական դեպքերի վրա:

-Իմ գրքերում միշտ էլ կա մի իրական բան, կյանքից մի դեպք, կարևոր չէ, իմ հիշողությունն է, թե կատարվել է մեկի հետ, պատմել են ինձ, թե անձամբ եմ տեսել: Սա դրդում է ինձ գրել:

-Դու ասում էիր գրականությունը պիտի վախեցնող և հուզող լինի, նյարդայնացնող և կամակոր: Ինչո՞ւ:

-Ես ուզում էի ասել, որ գրականությունը չպետք է ինչ-որ մեկին հարմար լինի: Այն պիտի մի քիչ թափ տա ընթերցողին: Քանի որ բոլոր մարդիկ ինչ-որ բանով նման են իրար, սակայն մեզնից ամեն մեկը ինչ-որ բանով նաև եզակի է, եթե դիտարկենք նրան անհատապես: Հարկավոր է այլ մարդկանց մեջ գտնել նրանց եզակիությունը. իրենց երջանկությունը, ցավը, չարությունը, փչացածությունը, ինչ պատահի: Եվ այն, ինչ կստացվի, կլինի մարդկայնության առկայծումներ, որն էլ հենց հուզում է ընթերցողին: Իսկ եթե ես ընթերցում եմ, սակայն ինձ համար միևնույն է, ապա էլ ինչո՞ւ եմ կարդում:

(Հատված՝ հարցազրույցից, որոնք արել են երեխաները՝ մանկական ամսագրի համար):

Թինան հարցնում է հորը. «Ինչո՞ւ ես, մայրիկը, Պեդրոն չենք կարող միասին ապրել»: Հայրիկը Թինային գրկում է և ասում. «Մեքենայի մեջ կոնֆետներ ունեմ»: Նա տխուր չի թվում, իսկ այ, մայրիկը՝ երբեմն: Թինան ապրում է փոքրիկ քաղաքում տատիկի ու հայրիկի հետ, որոնք իրեն շատ են սիրում: Նա մանկապարտեզ է գնում, սիրում է զբոսնել, հյուր է գնում ընկերուհուն, որը նաև իր հարևանուհին է: Կիրակի օրերին, ինքն ու հայրիկը հյուր են գնում մայրիկին ու Պեդրոյին: Դա շատ հեռու չէ, մի յոթանասուն կիլոմետր, սակայն ավելի հաճախ այցելել չի ստացվում. մեկ հայրիկն է աշխատանքի, մեկ Թինան է մանկապարտեզում:

«Աղջիկը, սիրտը և տունը»՝ սա մի պատմություն է լքած և լքված կանանց մասին: Թինայի տատիկը՝ նրա մայրիկի մայրիկը, հեռացել էր տանից նորածին որդու հետ՝ լքելով ամուսնուն ու փոքրիկ դստերը, և այլևս հետ չէր դարձել: Թինայի մայրիկը հիշում է, թե ինչ է նշանակում ապրել առանց մոր, նա է այդ մասին պատմել Թինային, չէ որ Թինան մայրիկ ունի: Սակայն Թինայի մայրիկը Թինայի հետ չի ապրում, այլ եղբոր՝ Պեդրոյի, որը տառապում է Դաունի սինդրոմով: Եվ քնելիս Թինան մտածում է, որ երբ ինքը մեծանա և աղջիկ ունենա, ապա ոչ մի դեպքում և ոչ մի պատճառով նրան չի թողնի:

«Աղջիկը, սիրտը և տունը» մի պատմություն է այն մասին, թե ինչպես է Թինան հաղթահարում իր ընտանեկան պատմությունը, կտրում հեռացումների շղթան, և, վերջապես, միավորում իր ամենամտերիմ մարդկանց՝ մայրիկին, հայրիկին և Պեդրոյին:

Սա Անդրուետոյի վեպի ընդհանուր գաղափարն է: Հավանաբար հետաքրքրեց, քանի որ կամ դու, կամ քո մտերիմը հենց նման խնդրի առաջ եք կանգնած: Անկեղծ ասած, ես էլ շատ փնտրեցի, և ոչ միայն այս, այլև գրողի որևէ ստեղծագործություն: Ուզում էի մի բան թարգմանել ձեզ համար, ցավոք, ոչինչ չգտա: Ինչ արած, հիշեք այս անունը և հետագայում էլ փնտրեք, համոզված եմ, շատ շուտով որևէ բան հաստատ կհրատարակվի գոնե համացանցում: Իսկ երբ հրատարակվի, անպայման մեզ էլ ուղարկեք:

Իմ առաջին պատմվածքը

Ձանֆիդա



Իմ գյուղը Ձանֆիդան է, որը գտնվում է Արմավիրի մարզում: Իմ գյուղի հետ կապված շատ հետաքրքիր պատմություններ կան: Օրինակ, գյուղի անվանումն առաջացել է, երբ տեղացի ֆիդայիները մենամարտել են թուրքերի դեմ, և, երբ հաղթել են, գյուղացիները գոռացել են՝ «Ձան, ֆիդայիներ»: Եվ գյուղը հետագայում անվանափոխվել է Ձանֆիդա: Գյուղը սահմանամերձ է, և դեպի Արաքս գետը երկու քայլ է: Քանի որ ջանֆիդացիները իրենց լեզվով ծըռ (ծուռ) են, շատ պատմություններ են հորինել Արաքս գետի մասին, բայց դրանցից մեկը գիտեմ: Ասում են, որ իսկական հայը, երբ մտնում է Արաքսը, ջուրը տաքանում է, բայց երբ այլազգի մեկն է մտնում, ջուրը սառչում է: Գյուղում կա նաև մի լիճ, որն անվանում են Ավազանոց: Երբ լիճը սկսեց ճահճանալ, ոչ ոք ուշադրություն չդարձրեց, շարունակում էին առաջվա պես մտնել լողալու: Լողացողներից համարյա ոչ մեկը չփրկվեց: Լիճը սկսեցին կոչել Մահվան ճահճուտ: Ձանֆիդան տարբերվում է բոլոր գյուղերից իր մրգաշատ այգիներով, հյութալի վարունգով և քաղցր սոխով:

Մի պատմություն հիշեցի: Մի ամառային օր եղբայրներիս հետ որոշեցինք հարևանի այգուց խնձոր գողանալ: Ժամը մոտ տասն էր: Հաղթահարելով հարևանի բոլոր թակարդները՝ վերջապես հասանք խնձորենիներին և սկսեցինք քաղել: Այնքան քաղեցինք, որ չգիտեինք, թե ինչպես ենք տանելու: Մտածեցինք և որոշեցինք: Շապիկները դրեցինք տաբատների տակ և գնացինք մեզ մոտ ապրող բարեկամներից մեկի տուն: Եվ զարմացանք, քանի որ քաղել էինք մոտ յոթ կիլոգրամ խնձոր:

Յուլյա Սանոյան, 12տ.

Ֆենդոմներ

Ես սիրում եմ անիմեներ, ընկերուհիս սիրում է «Մատանիների տիրակալը», նրա ընկերուհին՝ «Գերբնականը» (Supernatural), իսկ քույրս՝ «Գահերի խաղը» (Game of Thrones) սերիալը: Հավանաբար ձեզանից շատերն էլ սիրում են «Հարրի Փոթերը», «Քաղցած խաղերը» (Hunger Games) կամ «Աստղային պատերազմները» (Star Wars): Մենք այս ամենը ընդամենը սիրում ենք, սակայն մեր կողքին՝ հենց այս աշխարհում, գուցե նաև մեր ընկերների մեջ կան մարդիկ, ովքեր «տառապում» են իրենց սիրելի ֆիլմերի, սերիալների, գրքերի կամ հերոսների ձեռքը: Նրանք ստեղծում են ֆանատների՝ երկրպագուների ակումբներ ու քննարկումներ կազմակերպում՝ այդ ֆան ակումբները կոչելով ֆենդոմներ (fandom), որոնց անդամները միավորվում են մի ֆիլմի, գրքի, սերիալի, վիդեո խաղերի և այլ թեմաների շուրջ: Սկզբում «ֆենդոմ» տերմինը նշանակում էր գիտաֆանտաստիկայով հետաքրքրվող մարդկաց խումբ, սակայն հիմա այն ավելի լայն նշանակություն է ստացել:

Առաջին ֆան ակումբներն ի հայտ են եկել 1930-ական թվականներին ԱՄՆ-ում, դրանց անդամները փոխանակվում էին նամակներով և իրենց հետաքրքրող թեմաների մասին հայտարարություններով: Հետագայում այս երևույթը սկսեց տարածվել նաև այլ երկրների պատանիների շրջանում: Շատ ֆաներ այնքան են կլանվում այդ հորինված աշխարհով, որ նույնիսկ սկսում են իրենց սիրելի հերոսի կերպարով ու հագուստով ապրել սովորական կյանքում: Ասում են, որ շատ սուբկուլտուրաներ առաջացել են տարբեր ֆենդոմներից: Նույն թեմայի շուրջ համախմբված մարդկանց քանակը այնքան էր մեծանում, որ այդ թեման դառնում էր առանձին ենթամշակույթ:

Հիմա ամենատարածվածն են «Մատանիների տիրակալի», «Հարրի Փոթերի», «Աստղային պատերազմների», «Աստղային ուղու», անիմեների և մանգաների, «Գերբնականի» և վերջերս նաև՝ «Շերլոքի» ֆենդոմները:

Ֆենդոմը այս սերնդում ամենաշատ հետաքրքրություն վայելող ենթամշակույթն է: Ֆաները իրենց ֆենդոմների համար հորինել են հատուկ անուններ, և յուրաքանչյուր ֆենդոմի ֆան կոչվում է այդ անունով: Օրինակ, անիմեի և մանգայի ֆաները կոչվում են օտակուներ, «Աստղային ուղի» սերիալի ֆաները՝ թրեքիներ, «Հարրի Փոթերի» մասին ֆիլմերի ու գրքերի ֆաները՝ փոթերագլուխներ, Ջոն Ռոնալդ Ռոուել Թոլքինի արվեստի սիրահարները, ով «Մատանիների տիրակալը», «Հոբիթ» և այլ գրքերի հեղինակն է, կոչվում են թոլքինիստներ, շերլոքամաններ՝ Շերլոքի սիրահարները, հուվիաններ (whovian)՝ «Բժիշկ Ով»-ի (Doctor Who) և այլն:

Հայաստանում նույնպես կարելի է հանդիպել այս ենթամշակույթին պատկանող ֆաների: Մեզ մոտ շատ են հատկապես օտակուները, փոթերամանները, շերլոքները: Ինչպես նաև վերջերս «Game of thrones»-ի և «Hunger games»-ի ֆաները: Եթե նրանց անգամ միայն անվանումը տաս, նրանք կսկսեն երկար պատմություններ դրա ստեղծման, հեղինակի, ֆիլմի ամեն վայրկյանին իրենց ապրած հույզերի և զգացմունքների մասին, և, եթե թույլ տաս, նույնիսկ այն մանրամասն կպատմեն՝ անկախ նրանից՝ դու դեռ պատրաստվում ես դա դիտել կամ կարդալ, թե՝ ոչ: Նրանք էլ, ինչպես աշխարհի բոլոր ֆենդոմների անդամները, շփվում են ինտերնետով: Ամեն օր փոխանակվում են իրենց մտքերով, ցանկություններով, տպավորություններով: Կարծիք կա, որ նրանք ընդամենը հուզական և անկայուն պատանիներ են, որոնք համախմբվում են՝ իրենց ժամանակը վատնելու՝ ողջ օրը միայն ասելով, թե որքան են սիրում այս կամ այն գիրքը, ֆիլմը, վիդեո խաղը: Նաև ասում են, որ ֆենդոմը անգործ և միայնակ մարդկանց համար զբաղմունք գտնելու հրաշալի միջոց է: Իսկ հենց իրենց՝ ֆաների համար դա ապրելակերպ է, նրանք ապրում են իրենց սիրելի ֆենդոմում, դա է նրանց աշխարհը, ու այդտեղ են նրանք կարողանում արտահայտել իրենց մտքերը, շփվել իրենց նման մարդկանց հետ և բանավիճել մյուս ֆենդոմների հետ:

Դիանա Շահբազյան, 16տ.

Դասամիջոց

Նկարը՝ Մանե Պետրոսյանի, 10տ.

Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի, 16տ.

Երեխաները անկանխատեսելի են:
Երբեք չես իմանա, թե որ պահին կբռնացնեն քո սուտը:

«Մեր մարզային թղթակիցները» խորագրի նյութերը պատրաստվել են ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում պատանի թղթակիցների ցանցի ստեղծում» ծրագրի շրջանակներում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Մանանա-հրատ» ՍՊԸ
Վկայական՝ 02Ա046931 տրված՝ 31.12.1999

Թողարկումը պատրաստել են «Մանանա»
մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնի սաները

Նկարները՝ Մարիանա Հովսեփյանի 9տ., Աննամարի Հարությունյանի 10տ.,
Դիանա Աթանեսյանի 9տ., Մանե Պետրոսյանի 10տ., Ռուբեն Զրբաշյանի 9տ.,
Տատյանա Սաֆարյանի 12տ., Նորայր Բարոյանի 16տ.
Էջադրումը և ձևավորումը՝ Տաթևիկ Մկրտչյանի

Երևան, Մաշտոցի 45Ա, բն. 40, հեռ. 58 16 70
էլ. փոստ. mananacenter@gmail.com
www.mibanasem.com, www.mananayouthcenter.org

Տպագրված է Անհատ ձեռնարկատեր Սուրեն Ղալաչյան տպագրատանը
Տպաքանակ՝ 1500